Ազգ
Azg

7 ՄԱՅԻՍ 2013 ԵՐԵՔՇԱԲԹԻ 74(5157)

ISSN: 1829-1651

# Իսլամականները «գրոհում են» իլհամականների դիրքերը

«**Ազգ**»-ի նախորդ համարում մենք կարծիք էինք հայտնել, որ Ադրբեջանում դավանանքի ազատության մասին ԱՄՆ պետական դեպարտամենտի տարեկան զեկույցը կարող է այդ երկրում բերել իսլամական կուսակցության դերի աշխուժացման: Երեկ Ադրբեջանի իսլամական կուսակցության գործադիր կոմիտեն նիստ է հրավիրել եւ քննարկել աշնանը կայանալիք նախագահական ընտրությունների հարցը:

Ինչպես ասված է կուսակցության մամուլի ծառայության տարածած հաղորդագրության մեջ, իսլամականները «որոշել են ամենաակտիվ մասնակցությունն ունենալ ընտրություններին»: Այդ մասին գրել է haqqin.az-ը եւ ավելացրել, որ իսլամական կուսակցությունն արդեն իսկ ստեղծել է «նախագահական ընտրությունների նախապատրաստման խորհրդակցական խորհուրդ»:

Իսլամականներն իշխանություններին կոչ են արել կալանքից ազատել կուսակցության առաջնորդ հաջի Մովսում Սամեդովին, որը ազատազրկման է դատապարտվել Իրանի հետ ունեցած «ապօրինի կապերի համար»: Իսլամականները պահանջել են, որ «վերականգնվեն Մովսում Սամեդովի ընտրելու եւ ընտրվելու իրավունքները»:

Այս կերպ նրանք հասկանալի են դարձրել, որ նախագահի պաշտոնում մտադիր են առաջադրել Մովսում Սամեդովի թեկնածությունը: Հետաքրքրական է, որ Մովսում Սամեդովին կալանքից ազատելու եւ իրավունքները վերականգնելու կոչ իսլամական կուսակցությունը հղում է այն պահին, երբ ադրբեջանական կողմը ջանքեր է գործադրում հասնելու իրանական հատուկ ծառայությունների կողմից Թավրիզում մի քանի օր առաջ ձերբակալված՝ ԳԱԱ Գրականության ինստիտուտի աշխատակցուհի Խալիդա Խալիդի եւ վերջինիս վարորդի ազատմանը:

Իրանը դեռեւս պաշտոնապես չի պատասխանել, թե ինչ հանցանք է մեղսագրվում նրանց, բայց պետական հեռուստատեսության կայքէջում տեղեկություն է տարածվել, որ Խալիդա Խալիդը ձերբակալվել է «ապօրինի կապերի եւ սադրիչ գործողությունների» մեղադրանքով: Հնարավոր է, որ կողմերը համաձայնության գալու լինեն Խալիդա Խալիդին եւ Մովսում Սամեդովին փոխադարձաբար ազատ արձակելու հարցում:

Նման հեռանկարը կարող է բավական ընդունելի լինել Բաքվում իշխող վարչախմբի համար: Բանն այն է, որ հայտնի կինոռեժիսոր Ռուստամ Իբրահիմբեկովի կողմից շրջանառության մեջ դրված այսպես կոչված «Ազգային խորհուրդ» ստեղծելու գաղափարը սպառնում է լուրջ ընդդիմադիր շարժման սկիզբ դառնալ:

Բնակչության հավատացյալ հատվածի դուրսբերումն այդ ընդհանուր դժգոհությունից, հնարավոր է, վարչախմբին չափազանց ձեռնտու է այս պահին: Ուստի հավանական է, որ իսլամականները եւ իլհամականները գալիք ընտրապայքարում խաղալով տարբեր դաշտում, իրականում անեն նույն գործը՝ ապահովեն կառավարող վարչախմբի պարզ վերարտադրությունը:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Միայնակ կառավարելու վտանգները

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ




Սխալվում են բոլոր նրանք, ովքեր կարծում են, թե կիրակի օրը տեղի ունեցած Երեւանի ավագանու ընտրություններին ինչ-որ անսպասելի կամ անկանխատեսելի բան է տեղի ունեցել: Երբ նույն տարվա մեջ տեղի են ունենում խորհրդարանական եւ նախագահական ընտրություններ, որոնցում արձանագրվում են կանխատեսելի արդյունքներ, սթափ տրամաբանությունը հուշում է, որ միեւնույն բանը պետք է կատարվի նաեւ երրորդ ընտրությանը՝ մեկ-երկու նոր նրբերանգները չհաշված: Է, ուրեմն ի՞նչի էր սպասում մեր ընդդիմությունը, ի՞նչ հրաշքի:

Բայց նախ չի խանգարի «**Ազգի**» ընթերցողին հիշեցնել Երեւանի ավագանու ընտրությունների վերաբերյալ ԿԸՀ նախնական արդյունքները. 464 տեղամասերի հաշվարկների արդյունքում ավագանի են անցնում ընդամենը ՀՀԿ-ն (55,89 տոկոս կամ 235512 քվե), ԲՀԿ-ն (23,07 տոկոս կամ 97 189 քվե) եւ «Բարեւ, Երեւանը» (8,48 տոկոս կամ 35732 քվե): Ընտրապայքարին մասնակցած ՀԱԿ-ը (4,39 տոկոս), ՀՅԴ-ն (3,8 տոկոս), ՕԵԿ-ը (3,73 տոկոս), «Առաքելությունը» (0,64 տոկոս) 6 տոկոս անցումային շեմը չեն հաղթահարել: Նրանց հավաքած ընդհանուր հաշվով 12,56 տոկոս քվեները նույնպես բաշխվելու են ավագանի անցած քաղաքական ուժերի միջեւ, ասել է թե՝ նրանք ջանում էին ՀՀԿ-ի, ԲՀԿ-ի եւ «Բարեւ, Երեւանի» համար: Այդպիսով ՀՀԿ-ի տոկոսները կբարձրանան ու կհասնեն 62,91-ի (41 անդամի), ԲՀԿ-ինը՝ 25, 97-ի (17 անդամի), «Բարեւ, Երեւանինը» 11, 12-ի (7 անդամ):

Այս թվերով, որոնք 7 օր հետո վերջնական արդյունքներով հազիվ թե մեծ փոփոխություններ կրեն, ՀՀԿ-ն ոչ մի պատճառ չունի կոալիցիա կազմելու, քանի որ հանգիստ կարող է քաղաքապետ առաջադրել առանց ավագանի անցած մյուս ուժերի օգնության:

Երեւի շատերը նկատեցին, որ խորհրդարանական ընտրություններին աշխատեցված ողջ ընտրամեխանիզմը կիրառվեց նաեւ այս ընտրություններին, եւ բնորոշումների առումով ամենից ճիշտը գուցե «Ժառանգությունից» Ստյոպա Սաֆարյանն էր՝ «կանխավ պարտված ընտրություններ» հետընտրական պայծառացումով: Ու, իսկապես, այս ընտրություններն ավարտվել էին արդեն խորհրդարանական ու նախագահական ընտրությունների ժամանակ, հատկապես վերջին դեպքում, երբ թվով երկրորդ քաղաքական ուժը որոշեց չխանգարել ՀՀԿ թեկնածուի ընտրությանը: Այդ դեպքում անհասկանալի է մնում մեկական հարց՝ ուղղված ընդդիմությանն ու իշխանությանը: Ինչո՞ւ մասնակցել այդ կանխատեսելի ընտրություններին եւ պարտվել՝ ընդդիմության մասով, եւ ՀՀԿ-ի մասով՝ ընդդիմադիր ընտրազանգվածին անտարբերությունից հանող դեմքերի բացակայության եւ առկա ընդդիմությունից հիասթափվածության պայմաններում:

Տես էջ 2

# Հայ ժողովրդից երախտիք արաբ ժողովրդին մայիսի 6-ի առիթով

Հայ եւ արաբ ժողովուրդների թշնամության մասին երբեք որեւէ խոսակցություն չի եղել: Գուցե՝ որովհետեւ հայերս երբեք որեւէ ժողովրդի մեջ թշնամի չենք համարում, գուցե՝ որովհետեւ արաբ՝ հատկապես Սիրիայի արաբ ժողովուրդը մեր ժողովրդի զավակներին հյուրընկալեց Ցեղասպանության ժամանակ, եւ վերջապես գուցե՝ որովհետեւ Լիբանանի հանրապետության կայացման, նրա պատմության մեջ անուրանալի տեղ ու դիրք ունեն հայերը: Փոխարենը բազմաթիվ են փաստերը մեր բարեկամության:

Երեկ, մայիսի 6-ին, մայրաքաղաքի Իսակովի պողոտայում, Երեւանյան լճի մոտ, ամերիկյան դեսպանատան հարեւանությամբ, «Հայ ժողովրդից՝ արաբ ժողովրդին երախտիքի հուշարձան» վերտառությամբ հուշարձանի մոտ տեղի ունեցավ ոգեկոչման արարողություն: Այն նվիրված է հատկապես Սիրիայի ու Լիբանանի (ժամանակին այս երկրները մեկ երկիր էին) մեծ ողբերգությանը. 1916-ի հենց մայիսի 6-ին թուրք Ջամալ փաշան, ով Կոստանդնուպոլսից էր գործուղվել Սիրիա, կախաղան հանեց արաբ մտավորականության բազմաթիվ ներկայացուցիչների՝ ազգային-ազատագրական պայքարի մարտիկների: Մինչեւ այսօր արաբները հիշատակում են այս օրը:

Արարողությունը տեղի ունեցավ Ոսկան արքեպիսկոպոս Գալփակյանի հանդիսապետությամբ: Ի դեպ, վերջինս ծնվել է Լիբանանում, այնուհետեւ երկար տարիներ ապրել Սիրիայում, եւ ինչպես ինքն է ասում. «Ինձ համար այդ երկրները հարազատ են»: Սրբազանը, ընդգծելով, որ արաբ ժողովուրդը հյուրընկալել է Ցեղասպանությունից տուժած հայ ժողովրդի զավակներին, ասաց. «Այսօր մենք ոչ միայն մեր երախտիքն ենք հայտնում արաբ ժողովրդին, այլեւ նրանց հետ, նրանց կողքին հիշատակում ենք իրենց անմեղ նահատակներին»:

Մարդկության դեմ կատարված մեծագույն ողբերգությունները կրոն, ազգային պատկանելիություն չեն ճանաչում, եւ դրանց դատապարտումը վերաբերում է բոլոր ազգերին, քանի որ կարող են տեղի ունենալ բոլոր ազգերի հետ:

Հ. Ա.

# Շառլ Ազնավուրը՝ Ֆրանսուա Օլանդին

**Լոս Անջելեսի ՌԱԿ «Նոր օր» շաբաթաթերթի տեղեկությամբ՝ Շառլ Ազնավուրը RTL հեռուստատեսության միջոցով անդրադարձել է Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդի քաղաքականությանը՝ խնդրելով նրան «փոխել քաղաքականության ուղղությունը եւ դա անել հնարավորինս արագ»:**

**Անդրադառնալով Սոցիալիստական կուսակցության քաղաքականությանը՝ աշխարհահռչակ երգիչն ասել է. «Սոցիալիստական կուսակցությունը ըմբոստության է ինձ դրդում, որովհետեւ ամեն անգամ, երբ հայերի համար ինչ-որ բան է լինում, նրանք քվեարկում են մեր դեմ»: Ազնավուրը նկատի է ունեցել Հայոց ցեղասպանության ժխտումը դատապարտող օրենքը, որի ընդունմանը կողմ էր Նիկոլա Սարկոզին, որին, սակայն, ձախերը մեղադրում էին՝ դիտելով դա բացառապես նախընտրական քարոզչություն: Այդուհանդերձ, հենց իրենք քվեարկեցին օրենքի օգտին, որի առաջին նախաձեռնողներն իրենք էին:**

Մ. Բ.

# «Փակ շուկա» կամ Տարոնի խաչը

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ




Թեպետ քաղաքապետ Տարոն Մարգարյանը ավագանու վերջին նիստի ժամանակ հայտարարել էր, որ «Փակ շուկայի» հարցը կկարգավորվի, շուկան կպահպանի արտաքին տեսքն ու սեփականատերը միայն ավտոկայանատեղի կկառուցի, որը որեւէ կերպ չի վնասի շուկային, սակայն ավագանու ընտրություններից մեկ օր անց շուկայի սեփականատեր, Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի կուսակից, ԱԺ պատգամավոր Սամվել Ալեքսանյանի հրամանով կրկին սկսվել են շինարարական աշխատանքները: Թեպետ նույն ավագանու նիստի ժամանակ Մարգարյանը հայտարարել էր, որ բանակցություններ են ընթանում սեփականատիրոջ հետ ու մինչեւ վերջնական պայմանավորվածությունը շինարարությունը չի սկսվի, կամարներին ձեռք չի տրվի, սակայն, ինչպես երեւում է, Ալեքսանյանը խախտել է այդ պայմանավորվածությունը, եւ նոր հարկաբաժնի կառուցումը, որի շինարարական աշխատանքները դադարեցվել էին նախագահական ընտրությունների շեմին, երեկ վերսկսվել է:

Պարոնյան 4ա շենքի բնակիչները հերթական անգամ նամակ են գրել նախագահ Սերժ Սարգսյանին, վարչապետ Տիգրան Սարգսյանին եւ ՄԻՊ Կարեն Անդրեասյանին, որ շուկայի շենքի պարագծով ինքնակամ, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի մոտ 7 մետր լայնքով եւ 6-8 մետր խորությամբ եւ հարեւան շենքերից անթույլատրելի հեռավորության վրա հիմքեր են փորվում՝ վտանգելով շենքերի սեյսմակայունությունը:

Տես էջ 3

ԱԶԳ

## Ընթացիկ

# Աշխատանքային օրերի անիմաստ տեղափոխություններ

Մայիսի 10 կառավարության երեկվա որոշմամբ ոչ աշխատանքային է լինելու, չորս օր անընդմեջ՝ մայիսի 9-ից 12-ը, կլինեն հանգստյան օրեր: Նման որոշումներ կառավարությունը տարեկան ընդունում է նվազագույնը 4 անգամ՝ մեռելոցների ժամանակ: Մի քանի անգամ էլ լինում են այնպիսի օրեր, երբ տոն օրվան հաջորդում է ուրբաթ օրը, ինչպես այս անգամ է եղել: Այդ ժամանակ եւս կառավարությունը հանգստյան օրը տեղափոխում է ուրբաթ՝ աշխատանքայինը՝ հաջորդ շաբաթ: Նման որոշումները գուցե դրական նպատակ են հետապնդում՝ մարդկանց համար անընդմեջ հանգստի հնարավորություն տալով: Սակայն արդյոք ճի՞շտ է նման մոտեցումը՝ թե՛ մարդկանց հանգստանալու առումով, թե՛ երկրի տնտեսության համար:

Առաջին հերթին, տարվա մեջ 4 մեռելոցի օրերը պետականորեն այս ձեւով նշելը, մեղմ ասած, անհասկանալի է եւ տարօրինակ: Ի վերջո, մենք ապրում ենք աշխարհիկ եւ ոչ թե կրոնական պետության մեջ, եւ նույնաբնույթ եկեղեցական 4 տոն, առավել եւս, տխրություն սիրող մեր ժողովրդի համար, շատ շատ է: Պարզապես անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքային օրվա տեղափոխումը այդ օրերին եւ մարդկանց եռանդն ու հնարավորությունները ոչ թե դեպի գերեզմաններ ուղղել, այլ՝ աշխատելուն:

Ի՞նչ է տեղի ունենում աշխատանքային օրերի տեղափոխման ժամանակ: Եթե կարճ ասենք՝ իսկական խառնաշփոթ: Կառավարության որոշումն ամբողջությամբ գործում է միայն նախարարությունների, պետական այլ գերատեսչությունների եւ կառույցների համար: Մասնավոր հատվածում այդ որոշումը կամ չի գործում, կամ գործում է մասամբ՝ խաթարելով կանոնավոր աշխատանքային ռեժիմը: Առեւտրի եւ սպասարկման բոլոր օբյեկտները, փոքր արտադրությունները, կառավարության որոշմամբ ոչ աշխատանքային հայտարարված օրերին աշխատում են նույն գրաֆիկով եւ ստանում են նույն վարձատրությունը: Խոշոր ընկերությունները, անկախ նրանից, թե գործունեության ինչ տեսակով են զբաղված, հայտնվում են անորոշ վիճակում: Մի մասն աշխատում է, մյուս մասը մասամբ է աշխատում, երրորդները՝ հարկադրված չեն աշխատում: Վերջին երկուսը կրում են կորուստներ, ինչը մեծ հաշվով երկրի ընդհանուր տնտեսական կորուստն է դառնում:

Անհասկանալի վիճակ է ստեղծվում նաեւ վճարման առումով: Գործատուները, բնականաբար, չեն ցանկանում այդ օրը վճարել լրացուցիչ, աշխատողներն էլ դժգոհ են մնում, որ ոչ աշխատանքային օրն իրենք աշխատում են, առավել եւս՝ առանց լրացուցիչ վարձատրության եւ առավել եւս, որ աշխատելու են նաեւ հաջորդ շաբաթ օր տեղափոխված աշխատանքային օրը: Այսինքն, մյուս բացասական գործոնն էլ այն է, որ 3 կամ 4 օր հանգստանալուց հետո, հաջորդ շաբաթ պետք է աշխատել 6 օր եւ հանգստանալ 1 օր: Հիմա այդ մարդկանց լավությո՞ւն ենք անում, թե՞ վատություն՝ հանգստյան օրը տեղափոխելով: Նրանք ավելի լավ են աշխատելու կանոնավոր դարձած ռեժիմո՞վ, թե՞ 3 օր աշխատելով, 4 օր հանգստանալով, ապա 6 օր անընդմեջ աշխատելով:

Ընդհանրապես, մեր երկրի տոնացույցում ոչ աշխատանքային օրերը քիչ չեն եւ այդ հանգամանքը ոչ առանց դժգոհության նշում են նաեւ օտարերկրյա գործարարները: Հունվարի 1-7, հունվարի 28, մարտի 8, մայիսի 1,9, 28, հուլիսի 5, սեպտեմբերի 21, դեկտեմբերի 31: 15 ոչ աշխատանքային օրեր: Զարգացման փուլում գտնվող երկրի համար, երբ գյուղապետից մինչեւ նախագահ հայտարարում են, որ միայն տքնաջան աշխատանքով կարող ենք ստեղծել բարեկեցիկ երկիր եւ բարձր կենսամակարդակ ունեցող ժողովուրդ, ճոխություն չէ՞ այդքան ոչ աշխատանքային օրեր ունենալը: Երբ մեր երկրի զարգացման մակարդակը հասնի ԵՄ երկրների մակարդակին, գուցե այն ժամանակ նման ճոխություն մեզ թույլ տանք, գուցե 8-ժամյա աշխատանքային օրն էլ դարձնենք 7-ժամյա, աշխատանքային շաբաթվա վերջին օրը՝ 4-ժամյա, վճարվող արձակուրդը՝ 40 օր եւ այլն: Գուցե, բայց դա ապագայում, եւ եթե հիմա աշխատենք ու հասնենք այդ մակարդակին: Իսկ մինչ այդ, գոնե աշխատանքային ռեժիմը խաթարող անիմաստ տեղափոխություններից հրաժարվենք, իսկ որոշ տոներ էլ (օրինակ՝ մայիսի 1, մայիսի 28, հուլիսի 5, հունվարի 7) դարձնենք աշխատանքային:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՁԱԳԱՆՔ

# Փրկօղակը պետք է փնտրել գիտատեխնիկական առաջընթացի մեջ

**Արձագանք ապրիլի 30-ին «Ազգ» օրաթերթում տպագրված Վահան Համազասպյանի՝ ՀՀ վարչապետին ուղղված բաց նամակին:**

Բարձրագույն կրթությամբ տաքսու վարորդ եմ:

Հայաստանի հելիոֆիկացման ծրագրի հեղինակ Վահան Համազասպյանին ծանոթ եմ դեռեւս Մոսկվայում ասպիրանտուրայում ուսանելու տարիներից: Որպես գիտատեխնիկական ուղղվածության բաժնի վարիչներ սերտ համագործակցել ենք Աբովյանի «Պոզիտրոն» արտադրական միավորումում, որտեղ մշակում եւ ներդնում էինք արտադրության մեջ էլեկտրոնային տեխնիկայի տարատեսակ տարրեր:

Ավա՜ղ. այդ քաղաքաստեղծ հսկա գործարանները այսօր գրեթե չեն գործում: Այնտեղ, որտեղ ինտեգրալ սխեմաներ էինք թողարկում, ներկայումս որակյալ սունկ են աճեցնում: Ես ընտանիքիս հանապազօրյա հացը վաստակում եմ վերը նշված «ինովացիոն» մասնագիտությամբ, իսկ անկոտրում կամք ու եռանդ ունեցող անվանի գիտնական Համազասպյանը 20 տարվա գործազուրկի կարգավիճակով դեռեւս ձգտում է վերականգնել հայ ինժեների եւ գիտնականի վաղեմի կորցրած առաքելությունն ու հեղինակությունը, որոնք խամրել են մեր օրերի կլանային օլիգարխիկ միջավայրի մեջ:

Առաջարկվում է արեւային տեխնիկայի եւ տեխնոլոգիաների ուղղության զարգացման ծրագիրը հանրապետությունում, որի հեռանկարային եւ ռազմավարական նշանակությունն ու արդիականությունը անվիճելի են հատկապես մեր օրերում՝ հանրապետության խոր ճգնաժամի պայմաններում:

Համաձայն եմ նամակի հեղինակի հետ՝ Հայաստանի արդյունաբերության մեջ չեն եղել ու չկան այնպիսի խնդիրներ, որոնք անլուծելի լինեն դեռեւս փախստականներ չդարձած մեր գիտնականների, ինժեներների եւ բարձրակարգ բանվորների համար: Ի՞նչ է մնում. մնում է, որ պետությունը երեսով շրջվի դեպի գիտությունն ու տեխնիկան:

Սնկաբուծությամբ, չիր ու չամիչ արտադրելով ու երկրի ընդերքը եւ հայրենիքը դատարկելով պետություն չենք դառնա:

Հիշենք միայն մի օրինակ. երկարունձիգ 25 տարիների ընթացքում ԱՄՆ-ը, ստեղծելով ՀԱԲԼ տիեզերական աստղադիտարանը (որը այսօր էլ հաջողությամբ է գործում), շատ լուրջ գիտատեխնիկական մակարդակի արդյունքների հասնելուց ու ֆինանսական միջոցներ ստանալուց բացի ունեցավ շուրջ 400 նոր տեխնոլոգիաներ: Ֆանտաստիկա:

Իսկ ո՞ւմ ենք սպասում մենք, պարոնայք վարչապետ, նախարարներ ու պատկան մարմիններ: Նման բազում օրինակներից մենք չպետք է դասեր քաղենք:

Կոնկրետ մասսայական արտադրության համար պատրաստ են հայրենական մշակման նոր հելիոհամակարգեր, որոնք կյանքի կոչելու ի զորու չէ անհատը կամ թեկուզ խումբը: Հարգելի իշխանություն, ինչո՞ւ չընդունենք առաջարկը, կամ, ճիշտ է ասվում հոդվածում, Մեծ եղեռնի հարյուրամյակին ընդառաջ ինչո՞ւ չփորձենք աշխարհին ներկայանալ թեկուզ երկու գյուղի հելիոֆիկացմամբ, որից մեկը՝ Ղարաբաղում (շատ խորիմաստ քաղաքական քայլ), չէ՞ որ այսօր աշխարհն է զբաղվում արեւային էներգետիկայով:

Համոզված եմ, որ նման փորձնական ծրագրի իրականացումից կունենանք շատ լուրջ տնտեսական արդյունքներ, որոնք հնարավորություն կտան մեր արդյունաբերության թռիչքաձեւ զարգացմանը, ինչպես նշվում է բաց նամակում:

Կազմակերպչական տեխնոլոգիաների երկարամյա կիրառումը չի կարող շտկել մեր ծանր կացությունը. Հայաստանի Հանրապետության տնտեսության փրկօղակը պետք է տեսնել գիտատեխնիկական առաջընթացի մեջ:

ԼՅՈՒԴՎԻԳ ԱՆՏՈՆՅԱՆ
Ֆիզիկոս, ք. Աբովյան,
Եղբայրության 3/28

# Միայնակ կառավարելու վտանգները

*1-ին էջից*

**Ինչո՞ւ գործադրել ահռելի ֆինանսական ու վարչական ռեսուրսը, եւ որ ավելի կարեւոր է՝ ինչո՞ւ նորից քաղի խաժամուժը լցնել ընտրատեղամասեր եւ զոռաշարժել (նրանց ներկայությամբ վիրավորելով նորմալ ընտրողին), քանի որ ՀՀԿ-ն ու նրա թեկնածուն վարչական ռեսուրսի առկայությամբ ու լուրջ մրցակցի բացակայությամբ ոչ մի շանս չունեին... պարտվելու: Հավանաբար ՀՀԿ-ին, այնուամենայնիվ անհանգստացրել է ԲՀԿ-ն, եւ նա իրեն ապահովագրել է պարզապես ավանդական մեթոդներից եւս չխորշելով:**

**Այսպիսով՝ ավարտվեց քաղաքական դաշտի վերջնական մենաշնորհացման գործընթացը, ինչը ՀՀԿ-ին թույլ կտա ընդհանրապես իրենով անել ամեն ինչ եւ ամեն բան ողջ Հայաստանով եւ Երեւանով: Առաջին հայացքից դա կարող է ՀՀԿ-ի ներսում լավ գնահատականի արժանանալ, քանի որ ՀՀԿ-ն բոլոր հնարավորություններն ունի իր կուսակիցներով միայնակ կառավարելը շարունակելու, իրեն ցանկալի օրենքներն ընդունելու կամ խաղի կանոններ սահմանելու: Հեշտ որոշումներ, առանց լուրջ դիմադրության աշխատանք, սա է ենթադրելին: Սակայն, մյուս կողմից, միայնակ կառավարելը նաեւ շատ մեծ վտանգներ ունի իր մեջ: Միայնակ պատասխանատվություն ստանձնել ամեն ինչի համար՝ ե՛ւ լավի, ե՛ւ վատի, արտագաղթի, սոցիալական վատ վիճակի, անարդարության մեծ դոզայի առկայության, մի խոսքով՝ դժգոհության եւ ատելության միայնակ հասցեատեր դառնալու վտանգն առկա է: Այս իմաստով թերեւս ՀՀԿ-ն գուցե խնդիր ունենա, այո, կոալիցիա կազմելու:**



**ԲՀԿ-ն, որ նախապես ակնկալում էր մոտ 30 տոկոս քվե, գումարած ՀԱԿ-ի ու ՀՅԴ-ի տոկոսները՝ եթե նրանք անցնեին, ու այդպիսի դեպքում քաղաքային ավագանիում ահագին գլխացավանք կարող էր ստեղծել ՀՀԿ-ի համար, այժմ զրկվեց հնարավոր դաշնակիցներից ու ՀՀԿ-ին հակակշիռ դառնալու հնարավորությունից (եթե, իհարկե, նա այդպիսի խնդիր իրականում դրել էր իր առաջ): Եթե ԲՀԿ-ն դասական քաղաքական ուժ լիներ, մենք հանգիստ կարող էինք կանխատեսել, որ մոտակա տարիներին ԲՀԿ-ն պետք է դառնա ընդդիմություն, այնուհետեւ նորանա ու նոր ձեւավորվող ընդդիմադիր հոսանքերով հարստանալով՝ հաջորդ խորհրդարանական ընտրություններին վերջապես ՀՀԿ-ին փոխարինի: Սակայն ամբողջ բանն այն է, որ ԲՀԿ-ն դասական քաղաքական ուժ չէ, այնտեղ քիչ են քաղաքական գործիչները, շատ՝ գործարարներն իրենց շահերով: Այդ իսկ պատճառով, եթե ՀՀԿ-ն առաջարկի՝ ԲՀԿ-ն կարող է եւ կոալիցիա կազմել ՀՀԿ-ի հետ, եւ ինչպես ԶԼՄ-ներն էին գրում, եւ ավագանիում, եւ խորհրդարանում ու նախարարական պորտֆելներ վերցնելով կրկին կդառնա կառավարող ուժ: Իսկ ՀՀԿ-ին դա պետք կլինի ավելի լոյալ ու հանդուրժողական երեւալու, ավելի ոչ կոնֆլիկտային միջավայր ձեւավորելու համար: Իսկ թե ո՞ր ճանապարհը կընտրվի՝ պարզ կլինի ընդամենը այսօր, վաղը, երբ Սերժ Սարգսյանը կառավարություն կձեւավորի, ինչպես Հովիկ Աբրահամյանն է ասում, մեկ-երկու օր համբերենք: Եթե ԲՀԿ-ին նախարարական պորտֆելներ չտրվեն, ուրեմն առավել հեռահար գործընթացներ են սկսվելու:**

**Իսկ ընդհանուր առմամբ՝ այս ընտրությունները վերջնականապես զուլալեցին ջրերը: Նախ՝ ընտրողը վերջնականապես անկյուն քշեց օրվա ընդդիմությանը: Դժգոհեն, թե չդժգոհեն ընտրողից, նրան կաշառված անվանեն-չանվանեն՝ պարզ դարձավ, որ նա հույս չի կապում ընդդիմադիր միավորների հետ. եթե ընտրողն այլընտրանք տեսներ, անպայման կընտրեր նրան, անկախ նրանից՝ իրեն 10 թե 15 հազար դրամ կառաջարկեին, որքան էլ նրան կանաչ գրչով քվեարկել պարտադրեին, կամ մեքենայով ընտրության բերեին, կամ շենքի պատասխանատուն ակնդետ հետեւեր, թե «իր» մարդկանցից ով եկավ ընտրության, ով՝ ոչ: Հստակ այլընտրանք չի տեսել ընտրողը, ընդդիմության բոլոր միավորները սպառել են իրենց ռեսուրսները (անգամ 8 տոկոս հավաքած «Բարեւ, Երեւանը»), եւ ընտրողին զանազան պիտակներ կպցնելն այստեղ ոչինչ չի կարող փոխել:**

**Հիմա ընդդիմադիր դաշտը մնաց ձեռնունայն, եւ ընդհանրապես՝ ավագանու ընտրությունները դարձան վերջին շտրիխը քաղաքական դաշտում անխուսափելի մեծ փոփոխություններից առաջ: Հավանաբար այս տեսքով, այս ղեկավարներով ընդդիմությունն այլեւս ամուլ է, եւ ընդդիմադիր միավորները կկարողանան շարունակել ինչ-որ դերակատարություն ունենալ, եթե բովանդակային, եւ ինչու չէ, ատրիբուտային փոփոխությունների կենթարկվեն: Սակայն հասարակությունն արդեն ինքն առաջ կնայի՝ իր միջից նոր ընդդիմադիր միավորներ առաջ մղելով եւ ըստ էության փոփոխությունների ենթարկելով երկրի ընդդիմադիր դիմագիծը:**

***Հ. Գ. Երեկ մեր թաղում (Ավան-Առինջ) մի պահ էնքան թանկարժեք ու գոլդ համարներով մեքենաներ վզվզացին, որ փողոցներում խցանումներ էին առաջացնում, իսկ թաղի երեխեքը քննարկում էին, թե ո՞ր գոլդ համարներն են լավ՝ միայն 0-նե՞րով, թե՞ միայն 9-երով: Ու հանգեցին այն եզրակացության, որ մեծանան, միայն 0-ներով «Համեր» են ունենալու: Իսկ առանց քվեների հաշվելուն եւ ընտրության արդյունքին սպասելու ժամը 22:30-ից ՀՀԿ շտաբների մոտ սկսված բազմաձեւ ու հաղթական հրավառությունները սրտաճաք արեցին սրտից թույլ մարդկանց:***

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

## Անցուդարձ

Այն, ինչ տեղի ունեցավ մայիսի 5-ին, 2012-ի խորհրդարանական եւ փետրվարին կայացած նախագահական ընտրությունների շարունակությունն էր, թե՛ ձեւի ու բովանդակության, թե՛ արդյունքների առումով:

Նախագահական ընտրությունների ժամանակ պասիվ դիրքում հայտնված ԲՀԿ-ն, ՀՅԴ-ն, ՕԵԿ-ն ու ՀԱԿԿ-ն որոշեցին պայքարի մեջ մտնել՝ նախ հասարակության աչքում բարձրացնելու համար իրենց կուսակցության դերն ու նաեւ կարեւորելով մայրաքաղաքային ընտրությունները: Իրենց ընդդիմադիր հռչակած ուժերը՝ ՀՅԴ-ն, «Ժառանգությունը», ՀԱԿԿ-ն, ԲՀԿ-ն ու «Առաքելությունը» կարեւորեցին իրենց ցանկությունը, որ մեկմիլիոնանոց մայրաքաղա-




# Հետընտրական դիտարկումներ



քը ընդդիմության ձեռքում հայտնվի, սակայն այդ ցանկությունը մնաց ընդամենը ցանկություն: Այն, ինչ արվեց միասնական թեկնածու ունենալու կամ միասնական ճակատով պայքարելու համար, ընդամենը խոսակցությունների եւ հայտարարությունների մակարդակում մնաց, փակ դռների հետեւում հանդիպումները չհանգեցրին որեւէ փոփոխության: Սա ընդդիմության ամենամեծ սխալն ու պարտության հիմքն էր: Լավագույն օրինակը հարեւան Վրաստանում էր, երբ ընդդիմադիր մի քանի ուժեր վեր կանգնեցին կուսակցական եւ անձնային նեղ շահերից ու պայքարեցին ընդհանուր հակառակորդի դեմ: Հայաստանում այդ կամքը դեռեւս չկա:

Սակայն, բացի ընդդիմության միավորվելուց եւ նեղ կուսակցական շահը վեր դասելուց, կային այլ խնդիրներ եւս, որոնց պատճառով մայրաքաղաքն իր կարեւորագույն լծակներով հանդերձ կրկին իշխանության ձեռքում է:

«Առաքելություն» եւ «Օրինաց երկիր» կուսակցությունների մասին խոսելն անիմաստ է, «Առաքելությունը» որոշակի երիտասարդների համար հաստատվելու հարթակ էր, իսկ ՕԵԿ-ն արդեն ոչ միայն ՀՀԿ-ի արբանյակն է, այլեւ հանգող ուժ, որտեղ մտնում եւ պաշտոնավարում են այն քաղաքական գործիչները, որոնք այս կամ այն պատճառով չեն կարող ընդգրկվել ՀՀԿ ցուցակում եւ պաշտոն ստանալ:

Հայ հեղափոխական դաշնակցությունը ավագանու նախորդ ընտրությունների ժամանակ էլ չկարողացավ հաղթահարել 5 տոկոսի շեմն, ու այն ժամանակ էլ Արծվիկ Մինասյանը չկարողացավ ազգային քաղաքապետարան ստեղծել: Ակնհայտ է, որ այս ուժը փոփոխությունների եւ սերնդափոխության կարիք ունի, որովհետեւ նախորդ տարի կուսակցությունը գրանցեց եւս մեկ ցավալի ցուցանիշ եւ դժվարությամբ կարողացավ հաղթահարել 5 տոկոսի շեմն ու ընդգրկվել խորհրդարանում: Նախագահական շրջանի պասիվությունը թերեւս բերեց նրան, որ Դաշնակցությունն այս անգամ էլ մայրաքաղաքի կառավարմանը չի մասնակցում:

Հենց նախագահական շրջանում ունեցած ակտիվությունն ու Barevolution-ի դեռ չմարած պայքարը «Բարեւ, Երեւան» դաշինքին բերեցին շուրջ 9 տոկոս քվե ընտրություններին, հույս ունենանք, որ «Բարեւ, Երեւան»-ը մանդատները վայր չի դնի եւ կշարունակի ակտիվորեն պայքարել ու բարձրացնել մայրաքաղաքի հիմնախնդիրները:

Դա չորս տարի առաջ չարեց Հայ ազգային կոնգրեսը՝ հրաժարվեց մանդատներից ու ոչինչ չանելով քննադատեց իշխանությանը քաղաքի խնդիրների հարցում: Բնական է, որ երեւանցին, ով չորս տարի առաջ ձայն էր տվել ՀԱԿ-ին՝ հույսով, որ մայրաքաղաքային իշխանության մեջ ընդդիմության ներկայությունը կկարողանա զսպիչ լինել եւ հիմնախնդիրները կբարձրաձայնվեն, այսօր հիասթափված երեւանցին, բնականաբար, ձայն չէր տա իր քվեն արհամարհած ուժին: Հետաքրքրական է, որ չորս տարի քաղաքային իշխանությունը չկարեւորող քաղաքական ուժի ղեկավար Լեւոն Տեր-Պետրոսյանն իր վերջին հանրահավաքում հայտարարեց, որ կարեւորվում է ավագանու ընտրությունները. «Լավ է ուշ, քան երբեք» կարգախոսն այս պարագայում չգործեց: ՀԱԿ-ը Երեւանի ավագանու նոր կազմում չի լինի: Դրան թերեւս նպաստեց նաեւ այն հանգամանքը, որ վերջին մեկ տարվա ընթացքում Տեր-Պետրոսյանը որպես երկրորդ ընդդիմադիր ուժ ընկալում էր ԲՀԿ-ին եւ վերջին հանրահավաքի ժամանակ էլ ամբիոնից հայտարարեց, որ իշխանությունները խոչընդոտում են ընդդիմադիր երկու ուժերի՝ ՀԱԿԿ-ի եւ ԲՀԿ-ի աշխատանքին: Մինչդեռ ակնհայտ է, որ ԲՀԿ-ի վերին բուրգը չի կարող իշխանություն չլինել: Դա վկայեց նաեւ այն, որ փետրվարյան ընտրություններից առաջ ԲՀԿ ղեկավար Գագիկ Ծառուկյանը պահեց ինտրիգը մինչեւ վերջին պահն ու հայտարարեց, որ չի առաջադրվում նախագահական ընտրություններին, այս կերպ դեմ դուրս չգալով Սերժ Սարգսյանին: Սա անձերի հարաբերություն է, այս երկու կուսակցությունները ներքին օղակներում կարող են միմյանց ատել, քննադատել, հակամարտել ու պայքարել, սակայն վերին մակարդակում ԲՀԿ-ն ու իր առաջնորդը իշխանական բուրգի մի մասն են, եւ անձնային հակամարտության ժամանակ Ծառուկյանը հաստատ դուրս չի գա Սարգսյանի դեմ:

Որ ԲՀԿ-ն ընդդիմություն չէ, այլընտրանքային ուժ է, առավելապես հակված դեպի իշխանությանը, ապացուցում է նաեւ փաստը, որ ավագանու գործունեության 4 տարվա ընթացքում ԲՀԿ-ն որեւէ օրինագծի դեմ չի քվեարկել: Երկու անգամ էլ, երբ պետք է ավագանին ընտրեր քաղաքապետին, ԲՀԿ-ն թեկնածու չառաջադրեց եւ կողմ քվեարկեց թե՛ Կարեն Կարապետյանին, թե՛ Տարոն Մարգարյանին, հետեւաբար նախընտրական արշավի ժամանակ ԲՀԿ-ի՝ ընդդիմադիրի կերպարով ներկայանալը խիստ արհեստական էր եւ որոշ դեպքերում անգամ ծիծաղելի:

Ընտրության օրն ու դրանից մեկ-երկու օր առաջ ընտրակաշառք հիմնականում բաժանել են հենց ԲՀԿ-ն ու ՀՀԿ-ն, ՕԵԿ-ն այս անգամ ժամկետանց մուրաբաներով աչքի չընկավ ու հավաքեց 3 տոկոս: «Թաղի տղերք»-ին էլ օգտագործել են ՀՀԿ-ն ու ԲՀԿ-ն: Ընտրակաշառքին զուգահեռ, ՀՀԿ-ն, ինչպես միշտ, օգտագործել է նաեւ վարչական ռեսուրսը:

Սակայն պետք է նաեւ փաստել, որ հատկապես վերջին 2 շաբաթվա ընթացքում ընդդիմադիր բոլոր ուժերը միահամուռ «աջակցում» էին Տարոն Մարգարյանին:

Մայրաքաղաքի խնդիրները բազմաթիվ են, Տարոն Մարգարյանի չկատարած գործերը՝ նույնպես, սակայն մեր ընդդիմադիրներն ու նրանց առաջնորդներն այդ հարցերը թողած քննարկում էին երկու հարց՝ Մարգարյանի ունեցվածքն ու ռուս պարուհի Վոլոչկովային: Հատկապես Վոլոչկովայի հետ կապված պատմություններն ավելի էժանագին էին դարձնում ընտրապայքարն ու թեկնածուներին, եւ տպավորություն էր ստեղծվում, որ Մարգարյանին քննադատելու այլ հարց չկա, քան պարուհու թափանցիկ հագուստն ու սիլիկոնե կուրծքը մեկնաբանելը: Իրականում խնդիրները բազմաթիվ էին, ու երեւանցին ցանկանում էր այդ խնդիրների վերաբերյալ այլ թեկնածուների տեսակետներն էլ լսել: Բայց, ավա՜ղ...

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԴԺԳՈՀՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# Ընտրությունների մասնակից ուժերի հետընտրական արձագանքները

**Երեւանի ավագանու ընտրությունների մասնակից ուժերի արձագանքներից կարելի է գլխի ընկնել այդ ուժերի տրամադրությունների մասին:**

**ԲՀԿ-ն իր նախընտրական շտաբի հայտարարությամբ ընդհանրապես շնորհակալություն է հայտնել բոլոր այն ընտրողներին, որոնք սեփական խղճի ու քաղաքական համոզմունքների համաձայն են քվեարկել: Ու վերստին խոսացել է, թե ԲՀԿ-ի օգտին տրված յուրաքանչյուր ձայնը կարեւորելու է հետագա քաղաքական պատասխանատվության եւ ծրագրային մշակումների առումով: ԲՀԿ-ն դեռ վերլուծելու է ընտրությունների ժամանակ տեղի ունեցած խախտումները, բայց մի եզրահանգում ավագանու ընտրություններից շտաբի հայտարարության մեջ արդեն կար՝ «ընտրական մեխանիզմը մեր երկրում կարիք ունի հիմնովին վերափոխման»:**

**Ըստ ՀԱԿ հայտարարության՝ այս ընտրություններն ընտրախախտումների մակարդակով ոչ մի բանով չի զիջում վարչախմբի անցկացրած մյուս ընտրություններին՝ ընտրակաշառք, թաղային եւ ՀՀԿ-ական խուժանի միջոցով ուղղորդված քվեարկություններ, բազմակի քվեարկություններ, կուտակումներ, լցոնումներ, բացակայողների փոխարեն քվեարկություններ:**

**ՀՅԴ-ն գերագույն մարմնի հայտարարությամբ՝ ցավոք, այս անգամ էլ չհաջողվեց հասարակության մեջ ազաս քաղաքացու, արժանապատվորեն ընտրություն կատարողի գիտակցություն ձեւավորել. «Հերթական անգամ պետության եւ իշխող կուսակցության նույնացումը, վարչական ռեսուրսի անսանձ կիրառումը, համատարած ընտրակաշառքն արեցին իրենց գործը: Իշխանական մենաշնորհը կարծրացավ», ասված է հայտարարության մեջ:**

**Ավագանի չանցած ՕԵԿ-ն, ընդհակառակը, շնորհավորել է ավագանի անցած երեք քաղաքական ուժերին, չնայած իր հայտարարության մեջ չի զլացել նշել, թե «ընտրությունների վրա, սակայն, իր կնիքը թողեցին ընտրակաշառքների լայնածավալ բաժանումը, թաղային հեղինակությունների ակտիվ գործունեությունը, ինչը Երեւանի բազմաթիվ վարչական շրջաններում առաջացրեց վախի մթնոլորտ»:**

**«Բարեւ, Երեւանը» երեկոյան դեռ հայտարարություն չէր տարածել, սակայն կուսակցության ներկայացուցիչների խոսքով՝ այս դաշինքը հույսեր է փայփայում, որ ընտրությունների արդյունքները դեռ կփոփոխվեն վերահաշվարկի արդյունքում: Ի դեպ, ԿԸՀ տեղեկատվությամբ Երեւանի 13 ընտրատարածքային հանձնաժողովներից վերահաշվարկի պահանջով դիմումներ են ստացվել:**

**Իսկ «Առաքելություն» կուսակցության ավագանու ցուցակի երկրորդ համար Մանուկ Սուքիասյանը կոչ է արել ավագանի անցած այն կուսակցություններին, ովքեր գտնում են, որ ընտրություններն անցել են համատարած ընտրակեղծիքներով, վայր դնել մանդատները (այս կոչը վերաբերում է ԲՀԿ-ին եւ «Բարեւ, Երեւանին» հավանաբար), քանի որ փոքրամասնության դերի ստանձնումը կնշանակի ընդունել խաղի կանոնները, մինչդեռ մանդատները վայր դնելով կարելի է միասնական մոտեցում եւ ընդդիմադիր նոր ֆորմատ ստեղծել՝ միասնական հանրահավաք անելով, քաղաքական գնահատական տալով ավագանու ընտրություններին:**

Ս. Խ.

# «Փակ շուկա» կամ Տարոնի խաչը

*1-ին էջից*

**Թեպետ ամիսներ առաջ բնակիչներին խոստացել էին, որ նոր հարկաբաժին չի լինելու, եւ սյուների կառուցումը կանգնեցվել էր, սակայն երեկվանից տարածքում կրկին սկսվել է լայնամասշտաբ շինարարություն: Տպավորությունն այնպիսին է, որ Ալեքսանյանը սպասում էր բոլոր տեսակի ընտրությունների ավարտին, որ անարգել շարունակի քանդել հուշարձանը, դրանով որեւէ բիծ չթողնելով իր կուսակցության թեկնածուների վրա:**

**«Ազգ»-ը բազմիցս անդրադարձել է «Փակ շուկայի» խնդրին: Նախ՝ այս շուկան հուշարձան է, ճարտարապետական կոթող, եւ մշակույթի նախարարությունը չպետք է դրական եզրակացություն տար: Քաղաքապետարանն իր հերթին, անգամ դրական եզրակացության փաստաթղթի պարագայում, պետք է ցուցաբերեր կամք եւ թույլ չտար կառույցի փլուզումը:**

**Հիշեցնենք, որ երեք կամար արդեն փլվել է, տարածքի սեփականատիրոջ մտքի թռիչքը հասնում է այնտեղ, որ նա հայտարարում է, թե դա ինքնափլուզում է: Հատուկ նրա համար պարզաբանում ենք՝ երբ ամիսներ շարունակ շենքի հիմքը բուլդոզերով փորում ես, պատերը կորցնում են ամրությունն ու փլվում: Դա ինքնափլուզում չէ, դա վանդալիզմ է:**

**Պարոնյան 4ա շենքի բնակիչները որերորդ անգամ իշխանություններին հիշեցնում են, որ մանդատ ունեցող օլիգարխը ոտնահարում է իրենց իրավունքները, նոր հարկաբաժնի կառուցմամբ տարածքի մի քանի տասնյակ բնակիչներ ուղղակի զրկվում են արեւի լույսից:**

**«Մի՞թե Հայաստանում այդ աստիճան անզոր է պետական համակարգը բնակիչների օրինական իրավունքներն ու պահանջները պաշտպանելու համար: Վերջապես արձագանքեք եւ շտապ դադարեցրեք ապօրինությունը, կասեցրեք շուկայի տանիքի վրա նոր հարկաբաժնի շինարարությունը, վերացրեք դրա հետեւանքները, պաշտպանեք բնակիչների օրինական իրավունքներն ու հուշարձան շենքը: Իսկ ամենակարեւորը՝ վերականգնեք մեր հավատը»: Պահանջում են մայրաքաղաքի բնակիչները պաշտոնյաներին ուղղված նամակում:**

# Էդուարդ Բագրատի Աղայան

Վերջերս լրացավ հայ ականավոր հայագետ, ՀՀ ԳԱ իսկական անդամ, բան. գիտ. դոկ., պրոֆ. Էդուարդ Բագրատի Աղայանի ծննդյան 100-ամյակը:

Կյանքի իմաստավորված եւ արգասալից ուղի է անցել Աղայանը: Վաղաժամ (մեկ տարեկանում) զրկվելով հայրական հոգածությունից ու խնամքից՝ ապագա մեծ գիտնականը, հետագայում բացառապես ինքնուրույն ու միայնակ է հաղթահարել կյանքի բոլոր դժվարությունները: Լինելով ի վերուստ օժտված, բազմաձիր, խելացի եւ աշխատասեր՝ դեռ մանկական ու պատանեկան հասակից կարողանում էր համատեղել հոգեւոր պահանջների բավարարումը կենցաղային դժվարությունները հարթելու անհրաժեշտության հետ: Նա օգնում էր մորը տնտեսության մեջ, աշխատում հայրենական այգում, հայրենի գյուղի կոլտնտեսության հաշվապահությունում՝ զուգակցելով ուսումն ու աշխատանքը:



Հայկական բնաշխարհի այդ հեռավոր, գեղեցիկ ու բանաստեղծական անկյունը իր ընտրյալ զավակի մեջ խտացրել էր մարդկային բոլոր շնորհները՝ ուժեղ, կուռ տրամաբանություն (այստեղից էլ՝ սերը մաթեմատիկայի եւ հարակից գիտությունների ու մասնագիտությունների նկատմամբ), գեղեցիկի ու բանաստեղծության նուրբ զգացողություն (այստեղից էլ՝ սերը հայ դասական պոեզիայի նկատմամբ) եւ անսահման սեր ու անմնացորդ նվիրում մեր մեծասքանչ մայրենիին: Մայրենի լեզվի ու նրա պատմության հանդեպ այդ մեծ սերն ու նվիրումը ուղեկցեցին նրան ողջ կյանքում: Այդ սերն էլ բերեց նրան մայր բուհ, ուր աշակերտեց բանասիրական գիտության այն ժամանակվա մեր բոլոր նշանավոր դեմքերին՝ Մանուկ Աբեղյան, Գրիգոր Ղափանցյան, Հրաչյա Աճառյան, Արսեն Տերտերյան եւ ուրիշներ: Բացառիկ էր հատկապես մեծանուն Աճառյանի դերը, որը ուսումնառության հենց սկզբից նկատել էր պատանու մեծ ընդունակություններն ու սերը հատկապես լեզվաբանական առարկաների նկատմամբ: Աշակերտն էլ որդիական նվիրումով կապվեց իր մեծ ուսուցչի հետ, եւ այդ կապը շարունակվեց ու առավել ամրացավ հետագա ողջ կյանքում:

Աղայանը հայագիտության ասպարեզ մուտք գործեց իբրեւ բարբառագետ: Անդրանիկ աշխատանքը մայրենի՝ Մեղրու բարբառի քննությունն էր, որն Աճառյանի գիտական ղեկավարությամբ 1941 թվականին պաշտպանեց իբրեւ թեկնածուական ատենախոսություն:

Աշխատանքը 1954 թվականին անհրաժեշտ շտկումներով ու լրացումներով հրատարակվել է առանձին գրքով: Քաջ իմանալով իր մայրենի բարբառի բոլոր նրբությունները՝ Աղայանն ստեղծել է իր տեսակի մեջ կատարյալ մի գործ, որն ըստ արժանվույն գնահատվել է ժամանակին (տե՛ս Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ, Հաս. գիտ., 1955, էջ 97-102): Ի տարբերություն բարբառագիտական նկարագրական նման մենագրությունների, Աղայանը, հենվելով բառապաշարի ծագումնաբանական շերտերի, տրանցում կատարված հնչյունական տեղաշարժերի վրա, ներկայացնում է նաեւ այդպիսի տեղաշարժերի մոտավոր ժամանակագրությունը:

Աղայանը հետագայում էլ ամենատարբեր առիթներով հաճախ է անդրադարձել բարբառագիտության հիմնախնդիրներին: Հայ բարբառագիտության առանցքային խնդիրներից մեկն էլ եղել է եւ դեռեւս մնում է արդի հայ բարբառների ծագման, առաջացման մոտավոր ժամանակաշրջանի եւ դրանց հաջորդականության բացահայտումը: Այս խնդիրներին են նվիրված Աղայանի «Բարբառային հնագույն տարբերություններ հայերենում» (Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ, 1958, N 2), «Նոր հայերեն բարբառների առաջացման մասին» (Պատմա-բանասիրական հանդես, 1958, N 2), «О генезисе армянского консонантизма» (Вопросы языкознания, 1960, N 4), «Հին հայերենի-իւն (-եան, -ուն) -ուան հոլովումը» (Հանդէս ամսօրեայ, 1987 դ. տարի) հոդվածները: Հայերենի բարբառային գոյացությունների վերաբերյալ Աղայանն այն կարծիքին էր, որ «Չի կարելի խոսել առհասարակ հայերեն բարբառների մասին. անհրաժեշտ է տարբերել հին հայերեն բարբառներ եւ նոր հայերեն բարբառներ հասկացությունները եւ դրան համապատասխան էլ կատարել լեզվաբանական, բարբառագիտական հետազոտություններ» (Պատմա-բանասիրական հանդես, 1958, N 2, էջ 226): Հին հայերենի բարբառների մահացման եւ նորերի սաղմնավորման սահմանագիծը Աղայանը համարում է մ. թ. 2-ից 4-րդ, 5-րդ դարերը:

1945 թվականին «Հայ լեզվաբանության պատմություն» աշխատության համար Է. Աղայանին շնորհվել է բան. գիտ. դոկտորի գիտական աստիճան: Աշխատանքի առաջին հատորը լույս է տեսել 1958, երկրորդը՝ 1962 թվականին:

Գիտության մեջ արագ ու մեծ քայլերով էր առաջ ընթանում Աղայանը: Ունենալով գիտական հետաքրքրությունների լայն ու բազմակողմանի շրջանակ՝ նա անդրադարձել է հայագիտության, ընդհանուր եւ համեմատական լեզվաբանության առանցքային գրեթե բոլոր հիմնահարցերին: Այս իմաստով հատկապես ընդգծելի են «Լեզվաբանության հիմունքներ» (Ե., 1987. սրա առաջին հրատարակությունը՝ «Ընդհանուր լեզվաբանություն», 1947թվականին), «Գրաբարի քերականություն» (հ. I, գիրք Ա, Ե., 1967), «Ժամանակակից հայերենի հոլովումը եւ խոնարհումը» (Ե., 1967) աշխատությունների դերն ու նշանակությունը հայրենական գիտության մեջ: Իր տեսակի մեջ կոթողային աշխատանք է «Արդի հայերենի բացատրական բառարան» (Ե., 1976) 1615 էջով երկհատորյակը, ուր ընդգրկված է գրական աշխարհաբարն իր բոլոր շերտերով եւ ներկայացնում է արդի հայերենի՝ լիակատարին մոտեցող բառագանձի մեկնությունն ու ամփոփումը:

Աղայանն զբաղվել է նաեւ հայ տոմարների պատմության հարցերով, որոնց ամփոփումն է 1986 թվականին հրատարակված «Հայ տոմարների պատմություն» մենագրությունը, ուր ներկայացված ու բնութագրված են արեգակնային օրացուցային համակարգով ստեղծված հայոց Բուն թվականը, հայոց Մեծ թվականը եւ հայոց Փոքր՝ Սարկավագադիր թվականը:

Քաջատեղյակ լինելով արեւելյան բանասիրությանը, Արեւելքի գրականությանն ու մշակույթին՝ Աղայանը հաճախ է անդրադարձել արեւելագիտության խնդիրներին: Այսօր էլ իրենց նշանակությունը չեն կորցրել նրա «Նիզամի Գյանջեւի» (Ե., 1948), «Ալիշեր Նավոյի» (Սովետական գրականություն եւ արվեստ, 1948. N 5) ուսումնասիրությունները, իսկ «Դրվագներ արեւելքի գրականության պատմության» (Ե., 1974) աշխատությունը այժմ էլ կարող է իբրեւ ուսումնական այդ դասընթացի ձեռնարկ ծառայել:

Մեծ ու նշանակալից է Աղայանի վաստակը ուսումնական գործընթացներում: Այսօր էլ դեռ հայրենական բուհերում ընդհանուր լեզվաբանություն առարկայի գործող դասագրքերը Աղայանի «Լեզվաբանության ներածությունն» (Ե., 1967) ու «Լեզվաբանության հիմունքներն» (Ե., 1987) են: Աղայանի հեղինակակցությամբ կազմված միջնակարգ դպրոցի IV եւ V-VI դասարանների «Հայոց լեզու» դասագրքերը, մեր կարծիքով, մնում են լավագույնները թե՛ լեզվական իրողությունների սահմանման ճշգրտության ու հստակության, թե՛ մեթոդաբանական առումներով:

Գիտական յուրաքանչյուր խնդրի քննարկման կենտրոնական դեմքերից է եղել Աղայանը: Հանրապետական ու միջազգային բազմաթիվ գիտաժողովներում կարդացած նրա զեկուցումները առաջացրել են մեծ հետաքրքրություն եւ բացահայտել հայերենագիտության տվյալ բնագավառի վիճահարույց շատ հարցեր եւ առաջադրել նոր խնդիրներ:

Աղայանը ոչ միայն մեծ գիտնական էր, այլեւ ուսուցիչ էր բառիս ամենալայն իմաստով: Լեզվաբան-հայագետների բազմաթիվ սերունդներ են կայացել նրա անմիջական ղեկավարությամբ: Ասպիրանտների համար գիտական անփոխարինելի խորհրդատու էր նա եւ իսկական ուսուցչի լայնախոհությամբ էր մոտենում նրանց մեծ ու փոքր բոլոր խնդիրներին: Հայագիտության այսօրվա ավագ ու կրտսեր սերնդի շատ թե քիչ նշանակալից բոլոր դեմքերը գրեթե առանց բացառության նրա ուսանողներն ու ասպիրանտներն են եղել եւ վայելել նրա հոգածությունն ու մարդկային մեծ հմայքը:

Գիտական ու մանկավարժական գործունեությանը զուգահեռ Աղայանը վարել է նաեւ գիտա-կազմակերպչական, հասարակական, վարչական աշխատանքներ: Տարիներ շարունակ եղել է «Բանբեր Երեւանի համալսարանի» գիտական ամսագրի խմբագիրը, ղեկավարել է ԵՊՀ հայագիտական հետազոտությունների կենտրոնը, երկար տարիներ՝ 1956-1958 թվականներին եղել է ԵՊՀ-ի ընդհանուր եւ համեմատական լեզվաբանության ամբիոնի, զուգահեռաբար նաեւ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի համանուն բաժնի վարիչ: Կրթության նախարարությունում պաշտոնավարել է որպես բուհերի բաժնի վարիչ, եղել է ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի փոխտնօրեն, ԵՊՀ-ի բանասիրության ֆակուլտետի դեկան, Պետական համալսարանի գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր: Նկատի ունենալով նրա մեծ ծառայությունները հայագիտության ու գիտական կադրեր պատրաստելու գործում՝ ՀՍՍՀ կառավարությունը Է. Բ. Աղայանին ծննդյան 70-ամյակի կապակցությամբ պարգեւատրել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

Բնությունը նախանձելի շռայլությամբ էր օժտել Աղայան-մարդուն: Զարմանալի ներդաշնակությամբ նրա անհատականության մեջ մեկտեղված էին աշխարհիկ մարդ-քաղաքացին եւ լայնախոհ ու բեղուն գիտնականը, նուրբ քնարականությունն ու գիտական սթափ ու առողջ մտածողությունը: ԵՊՀ-ի բանասիրության ֆակուլտետի նրա առանձնասենյակը այն ժամանակվա համալսարանական նշանավոր գիտնականների յուրահատուկ հավաքատեղի էր դարձել: Գալիս էին Հր. Թամրազյանը, Մ. Մկրյանը, Լեւոն Ներսիսյանը, Հ. Ֆելեքյանը, ամբիոնականներ Է. Ավետյանը, Է. Աթայանը... ուրիշ նշանավորներ... Ծավալվում էր զրույցը գիտական ու մշակութային ամենատարբեր հարցերի շուրջը, սկսվում էր մի յուրահատուկ ներկայացում-շքահանդես հայ պոեզիայի, գրականության, արվեստի այլ տեսակների... Հոգեւոր խրախճանքի երանելի պահեր էին դրանք: Ինձ եւ սերնդակիցներիս էլ բախտ էր վիճակվել երբեմն ներկա լինելու եւ վայելելու այդ բացառիկ գեղեցիկ պահերը... Ժամանակը դեռ շատ բան ունի սրբագրելու... Իսկ ժամանակի հոսքի հետ դեռ նորովի են արժեքավորվելու Աղայան-գիտնականի մեծ վաստակն ու մարդ անհատի նրա կերպարը:

**ԳԱՂԹՈՒՀԻ ՀԱՆԱՆՅԱՆ**
**ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնի դոցենտ**

ԼՈՒՐԵՐ

## Միջոցառումների շարք՝ նվիրված Եղեռնի 100-ամյակին

Անգլիայում գործունեություն ծավալող «Կոմիտաս ինստիտուտի» եւ Լոնդոնի համալսարանի «Հայաստանի բարեկամներ» ընկերությունը Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին ընդառաջ կազմակերպել են միջոցառումների շարք, առաջինը կայացել է ապրիլի 16-ին: Ըստ ստացված հաղորդագրության՝ այդ օրը ներկայացվել է ռեժիսոր Սյուզան Խարդալյանի «Տատիկիս դաջվածքները» ֆիլմը:

Առաջիկայում սպասվում են հետեւյալ միջոցառումները: Մայիսի 9-ին Լոնդոնի համալսարանի «Բրունեյ Գալերի» մասնաշենքում տեղի կունենա «Հիշողությունների մեջ մոլորված» ընդհանուր խորագրով Ուտրեխտ համալսարանի պատմության ամբիոնի պրոֆեսորի օգնական դոկտ. Ումիտ Ունգուրի բանախոսությունը: Իսկ հունիսի 4-ին՝ «Ասորիները, քրդերն ու թուրքերը: Ողբերգություն հայերի ցեղասպանության կուլիսներում» խորագրով Սոդերտորն համալսարանի պրոֆեսոր դոկտ. Դեյվիդ Գոնտի բանախոսությունը:

«Կոմիտաս ինստիտուտում» գործող Հայկական ուսումնասիրությունների ծրագիրը հովանավորում է Գալուստ Գյուլբենկյան հիմնարկությունը:

Հ. Ծ.

## «Ձիթապտուղ վաճառողի որդին»

### *Ֆրանսահայ ռեժիսորի նոր ֆիլմը*

Գլենդեյլի կենտրոնական գրադարանի դահլիճում ապրիլի 19-ին կայացել է ֆրանսահայ մրցանակակիր կինոարտադրիչ Մաթյու Զեյթինջիօղլուի վավերագրական «Ձիթապտուղ վաճառողի որդին» 76-րոպեանոց ֆիլմը, որը Թուրքիայում անցկացրած իր օրերի մասին է: Ըստ «Արմինյն միրոր սփեքթեյթըրի»՝ նա Թուրքիա է գնացել կնոջ հետ՝ մեղրամիսը անցկացնելու եւ իր հայկական արմատները պարզելու համար: Տեղացիների հետ հարցուփորձերից ու քննարկումներից նա պարզել է, որ նոր սերունդը շարունակում է ժխտել հայերի ցեղասպանությունը:

Ֆիլմը, որն ընդգրկում է հարցազրույցներ եւ պատմական փաստեր, ցուցադրվել է ավելի քան տասը միջազգային փառատոներում եւ մրցանակի արժանացել «Լոս Անջելեսի ֆիլմերի եւ սցենարների փառատոնում» եւ «Լոս Անջելեսի ֆիլմերի մրցանակաբաշխության» ժամանակ:

Զեյթինջիօղլուն ծնվել է Վերսալում (Ֆրանսիա): Տնտեսագիտության եւ գործարարության գծով թեկնածուական է պաշտպանել Վերսալի համալսարանում: Հեղինակ է մի քանի կարճամետրաժ ֆիլմերի, որոնք մրցանակների են արժանացել տարբեր փառատոներում եւ ճանաչում բերել նրան: Դրանց շարքում հիշատակության արժանի են «Մարդը, որը քաղցած չէր», «Խոսիր ինձ հետ սիրո մասին» եւ «Բարերարն ու ագարակը» ֆիլմերը: Ներկայումս նա նոր վավերագրական ֆիլմ է պատրաստում Հնդկաստանում:

Հ. Ծ.

# Իսրայելի օդային հարվածներ Սիրիային

*Դրանք արդարացրեց միայն Սպիտակ տունը*



Մայիսի լույս 5-ի գիշերը իսրայելական ռազմօդանավերը հարվածներ են հասցրել Սիրիայի մայրաքաղաք Դամասկոսի արվարձան Ջամրայայի հետազոտական կենտրոնին եւ այլ օբյեկտների: Այդ մասին հայտարարել են Սիրիայի իշխանությունները: Նախօրեին իսրայելական աղբյուրները հաղորդել էին, որ Իսրայելի օդուժը Սիրիայի տարածքում ոչնչացրել էր հավանաբար լիբանանյան «Հզբոլլահ» արմատական խմբավորման համար նախատեսված հրթիռներ:

Բաշար Ասադի վարչակարգի բարձրաստիճան ներկայացուցիչներից մեկը լիբանանյան հեռուստաալիքներին հայտնել է, որ օդային գրոհների ենթարկված Սիրիան իր հրթիռներն ուղղել է Իսրայելի վրա:

Սիրիայի փոխարտգործնախարար Ֆայզալ Մեկդադը CNN հեռուստաալիքին տված հարցազրույցում ասել է, որ Դամասկոսը իսրայելական օդուժի հարվածները գնահատում է որպես «պատերազմի հայտարարում» եւ մտադիր է ձեռնարկել «պատասխան միջոցներ»: Պաշտոնյան ավելացրել է, որ Իսրայելը փաստորեն համագործակցում է ահաբեկիչների հետ:

Բրիտանական The Mirror թերթը պնդում է, թե Սիրիա են մուտք գործել Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի մոտ 1500 մարտիկներ, սակայն իրանցի զինվորական պաշտոնյաները հերքում են այդ պնդումը:

Լոնդոնի «Թայմս» թերթը մեջբերում է իսրայելական բանակային աղբյուրներից մեկի խոսքերը, որոնց համաձայն Իսրայելը այսուհետեւ եւս կկասեցնի զենքի մատակարարումն ահաբեկիչներին: Ենթադրվում է, որ իսրայելական օդուժի թիրախներից են եղել Իրանից բերված «Ֆաթեհ-110» հրթիռները, որոնք նախատեսված էին «Հզբոլլահի» գրոհայինների համար:

Սիրիացի բարձրաստիճան պաշտոնյաներից մեկը «Նյու Յորք թայմս» թերթի թղթակցին ասել է, թե օդային հարվածներից սպանվել են սիրիական ընտիր ստորաբաժանումների տասնյակ մարտիկներ:

Սիրիական ընդդիմության syriatruth.org կայքէջը պնդում է, թե սպանվել եւ վիրավորվել է մոտ 300 մարդ, ոչնչացվել են տասնյակ զինապահեստներ, ընդհանուր առմամբ՝ 43 ռազմական օբյեկտ (դրանցից մեկում, թերեւս, եղել են իրանցի զինվորական խորհրդատուներ): Նշվում է, որ գործողությանը մասնակցել է իսրայելական 18 ռազմօդանավ:

Սիրիական SANA պաշտոնական գործակալությունը եւս հաղորդում է մարդկային զոհերի մասին, չնշելով կոնկրետ թվեր: Ընդգծվում է, որ թիրախ են դարձել ինչպես ռազմական, այնպես էլ քաղաքացիական օբյեկտներ:

Russia Today հեռուստաալիքը մեջբերում է Սիրիայի անվտանգության ծառայության մի բարձրաստիճան աղբյուրի խոսքերը, որոնց համաձայն գրոհի ժամանակ իսրայելցիները նոսրացված ուրան պարունակող զենք են օգտագործել:

Իսրայելի օդային գրոհները խստիվ դատապարտել են Իրանի, Լիբանանի, Ալժիրի, Եմենի, Սուդանի, Թունիսի իշխանությունները, Արաբական պետությունների լիգան եւ այլն:

Միայն Սպիտակ տունն է արդարացրել Իսրայելի գործողությունները: Օբամայի վարչակազմի մամլո փոխքարտուղար Ջոշ Էռնեստը ԱՄՆ-ի լիակատար պաշտպանությունն է հայտնել Իսրայելի գրոհներին: Նա արդարացի է համարել իսրայելցիների երկյուղները լիբանանյան «Հզբոլլահ» խմբավորումից:

Պ. Ք.

# Ըստ ՄԱԿ-ի՝ քիմիական զենք օգտագործել են սիրիացի ապստամբները



Սիրիայում քիմիական զենքի կիրառման լուրերի ստուգմամբ զբաղվող ՄԱԿ-ի հատուկ հանձնաժողովը հրապարակել է իր նախնական հաշվետվությունը:

Հանձնաժողովի անդամ, Շվեյցարիայի նախկին գլխավոր դատախազ Կառլա դել Պոնտեն, որը հայտնի է նախկին Հարավսլավիայի հարցերով զբաղվող միջազգային դատարանում իր դատախազական աշխատանքով, Ռոյթեր գործակալության թղթակցին ասել է, որ առայժմ չկան Բաշար Ասադի բանակի կողմից քիմիական զենքի օգտագործման ապացույցներ:

«Մեր քննիչները Սիրիայի հարեւան երկրների գաղթակայաններում հարցուփորձ են արել տասնյակ զոհերի եւ բժիշկների: Հարցումների հիման վրա ստացվել են Սիրիայի տարածքում զարինի կիրառության հիմնավոր, բայց ոչ անհերքելի ապացույցներ: Սակայն, մեր տվյալներով, մարտական թունավոր գազ կիրառել է ընդդիմությունը, այլ ոչ թե Սիրիայի կառավարությունը», հայտարարել է Կառլա դել Պոնտեն Շվեյցարիայի հեռուստատեսությանը տված հարցազրույցում:

Միջազգային լրատվամիջոցների հրապարակումների համաձայն՝ Սիրիայի քաղաքացիական պատերազմի ընթացքում արձանագրվել է քիմիական զենքի օգտագործման 3 դեպք: 2012-ի դեկտեմբերին Հոմսում եւ 2013-ի մարտին Հալեպի շրջանում ու Դամասկոսի արվարձաններում: Ասադի կառավարությունը եւ ապստամբների ներկայացուցիչները միմյանց մեղադրում են քիմիական զենքի օգտագործման մեջ:

Մայիսի 1-ին ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման հայտարարեց, որ իր երկիրն ունի Սիրիայում քիմիական զենքի կիրառման նոր վկայություններ, ինչը նա ավելի վաղ «կարմիր գիծ» էր անվանել Սիրիայում ռազմական գործողություն սկսելու համար:

Միեւնույն ժամանակ Օբաման ընդգծել էր, որ ինքը ստույգ տեղեկություններ չունի, թե հակամարտության ընթացքում ով եւ երբ է օգտագործել քիմիական զենք: Նա պարզաբանել էր, որ որոշում ընդունելուց առաջ ԱՄՆ-ը պետք է հավաքի «բոլոր փաստերը»:

ՓՈՐՁԱՐԿՈՒՄ

# 120 միլիոնանոց ֆրանսիական հրթիռը պայթել է օդում

**Ֆրանսիայի արեւմտյան ծովափի մոտ անցկացվող զորավարժանքի ժամանակ «Le Vigilant» ատոմային սուզանավից արձակված M-51 բալիստիկ հրթիռը պայթել է օդում: Հրթիռի մնացորդներն ընկել են Ատլանտյան օվկիանոսի մեջ՝ Ֆինիստերի մարզի ափերից զգալի հեռավորության վրա: Այդ մասին հաղորդում է «Լը Պարիզիեն» թերթը:**

**120 միլիոն եվրո արժողությամբ բալիստիկ հրթիռը արձակումից քիչ անց ոչնչացրել է իրեն: Դա տեղի է ունեցել այն շրջանում, որտեղ տվյալ պահին դադարեցված էին նավարկությունը եւ օդանավերի թռիչքները: Չի հաղորդվում, թե պայթյունից որեւէ մեկը տուժե՞լ է, թե՞ ոչ:**

**M-51 բալիստիկ հրթիռը հնարավոր է լիցքավորել միջուկային մարտագլխիկով: Ի դեպ, պայթած հրթիռը որեւէ մարտալիցք չէր կրում:**

**Ֆրանսիայի պաշտպանության նախարարության ներկայացուցիչները երեկ դեռ չէին կարողանում բացատրել բալիստիկ հրթիռի ինքնաոչնչացման պատճառը:**

**M-51 հրթիռը ֆրանսիական բանակի ու նավատորմի սպառազինության մեջ է 2010 թվականից: Տվյալ բալիստիկ հրթիռի հեռահարությունը 10 հազար կիլոմետր է: Վերոհիշյալ անհաջող արձակումից առաջ M-51-ը հինգ անգամ հաջողությամբ փորձարկվել էր. երկու անգամ արձակվել էր սուզանավերից, երեք անգամ՝ ցամաքային կայանքներից:**

# Վախճանվել է Ջուլիո Անդրեոտտին



**Իտալիայում 95 տարեկան հասակում մահացել է յոթակի նախկին վարչապետ Ջուլիո Անդրեոտտին: Նրա մահվան պատճառները չեն հրապարակվել, նշում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը:**

**1954 թվականին նա 1 ամսով զբաղեցրեց ՆԳ նախարարի պաշտոնը: 12 տարի անց դարձավ պաշտպանության նախարար եւ այդ պաշտոնում մնաց 7 տարի: 1972-1973 թթ. եւ 1976-1979 թթ. նա վարչապետ եւ միաժամանակ պաշտպանության եւ ապա ՆԳ նախարար էր: 1983-ից արտգործնախարար էր մի քանի կառավարություններում: 1989-ին կրկին վարչապետ էր, 1991-ից՝ ցմահ սենատոր:**

**Վարչապետի կարիերան ավարտվեց 1992-ին, երբ արշավ էր սկսել կաշառակերության եւ մաֆիայի դեմ: Քաղաքականությունից վերջնականապես հեռացավ 1993-ին, երբ ինքը մերկացվեց ելուզակների հետ կապերի մեջ: 1990-ականների վերջերին լրագրող Նինո Պեկարելլիի սպանության հետ կապված դատավարությունում Անդրեոտտին սպանության մեղսակից ճանաչվեց եւ դատապարտվեց 24 տարվա բանտարկության, բայց 1 տարի անց ազատ արձակվեց:**

Պ. Ք.

# 1200 տարի անց գտնվել է Հերակլիոն եգիպտական քաղաքը

Առեղծվածներով շղարշված Միջերկրական ծովում ավելի քան 1200 տարի թաղված եւ մինչ այժմ «անհետ կորած» համարվող Հերակլիոն քաղաքը, ըստ ապրիլի 30-ի եւ մայիսի 1-ի «Հաֆինգտոն-պոստ» կայքի, հնէաբանները հայտնաբերել են Ալեքսանդրիայի մոտ գտնվող Աբուկիր ծոցում: Դուրս են բերվել զարմանալիորեն լավ պահպանված արժեքավոր ցուցանմուշներ եւ հուշարձաններ:

Քաղաքը, որին հույները տվել են Հերակլիոն, իսկ արաբները՝ Թոնիս անվանումը, առաջինը հայտնաբերել են 2000-ին ֆրանսիացի հնէաբան, ջրասուզորդ, դոկտ. Ֆրանկ Գոդիոն եւ Հնէաբան ջրասուզորդների եվրոպական ինստիտուտի (TEASH) հետազոտող խումբը 4 տարվա որոնումներից հետո: Քաղաքը, ըստ նախնական տվյալների, եղել է ոչ միայն միջազգային առեւտրական, այլեւ կարեւոր կրոնական կենտրոն:

Մինչ այժմ Միջերկրական ծովի հատակից դուրս են բերվել 700-ից ավելի խարիսխներ, խորտակված նավերի բեկորներ, ոսկեդրամներ, հունական կճիռներ, հին հունարենով գրված հուշատախտակներ, երեք մետր երկարությամբ քարե քանդակներ եւ հավանաբար զմռսված կենդանիների մարմիններ պարունակող սարկոֆագներ:

Մեծ քանակությամբ կերամիկական իրերի եւ մետաղադրամների առկայությունը ապացուցում է, որ քաղաքը ժամանակին եղել է չափազանց բարգավաճ: Այստեղ է գտնվել Ամոնի տաճարը, որը կրոնական կարեւոր դեր է խաղացել: Հիմնվել է մոտավորապես 8-րդ դարում մ.թ.ա.:

Հույն պատմիչ Հերոդոտոսի գրառումների համաձայն՝ հայտնի հերոս Հերակլեսի Եգիպտոս այցելության առթիվ այնտեղ կառուցվել է մի մեծ տաճար: Դարձյալ ըստ նրա՝ Տրոյական պատերազմից առաջ Հեղինեն ու Պարիսը այցելել են այդ քաղաքը:

Քաղաքի ջրասույզ լինելու հանգամանքների մասին ենթադրությունները տարբեր են: Դրանցից մեկը, ըստ Գոդիոյի խմբի, նշում է, որ ճահճային տարածքում հսկայական շենքերի ծանրությանը չի դիմացել քաղաքը եւ երկրաշարժային նույնիսկ փոքր ցնցումների հետեւանքով հայտնվել է ծովի հատակում:

Հ. Ծ.

## Մշակույթ

# Տիգրան Մանսուրյան. «Երաժշտություն գրելը ոչ թե պահի ներշնչանք է, այլ տառապալի աշխատանք»

Այսօր «Մեցցո» ակումբում տեղի կունենա մեծանուն հայ կոմպոզիտոր, արվեստի վաստակավոր գործիչ Տիգրան Մանսուրյանի հեղինակային երեկոյին:

Ծրագրում կինչեն՝ «4 երգեր», «Madrigal թիվ 3», «2 մաս լարային քառյակի համար», «Allegro Barbaro» եւ «4 հայրեններ»:

Տիգրան Մանսուրյանը նշեց, որ համերգի ծրագիրը լինելու է ե՛ւ երաժշտություն, ե՛ւ խոսք ու զրույց. «Համերգի ընթացքում կպատմեմ, թե որն է եղել այս կամ այն գործը գրելու մղող ուժը: Այս երեկոյի ընթացքում կներկայացնեմ իմ եւ ընկերներիս խմբանկարը»: Ըստ մաեստրոյի, դասական երաժշտության հեղինակները նվազ հաղորդակից են հանդիսատեսի հետ: Բայց Տ. Մանսուրյանը նշում է, քանի որ ունի նաեւ գրած երաժշտություն ֆիլմերի համար, հենց դա էլ հնարավորություն տվեց ներկայանալ այպիսի ձեւաչափով:




Համերգի ընթացքում Տիգրան Մանսուրյանը դաշնամուրով կնվագակցի մենակատարներին՝ սոպրանո՝ Իրինա Զաքյան, ալտ՝ Յանա Դարյան, ֆլեյտա՝ Նելլի Մանուկյան, դաշնամուր՝ Ջուլիետա Վարդանյան, թավջութակ՝ Արամ Թալալյան, «Թալալյան լարային քառյակ», (առաջին ջութակ՝ Թերեզա Նաչարյան, երկրորդ ջութակ՝ Ռիմա Միրզոյան, ալտ՝ Յանա Դարյան, թավջութակ՝ Արամ Թալալյան):

Տ. Մանսուրյանն ընդգծեց նաեւ, որ այժմ իրեն ֆիլմերի համար երաժշտություն գրելու առաջարկ չեն անում, որի համար ուրախ է, քանի որ մերժել չի կարողանում. «Ամեն անգամ ցանկանում եմ ինձ սովորեցնել, որ մերժել կարողանամ, բայց չի ստացվում»:

Անդրադառնալով երաժշտության ստեղծման գործընթացին, Տ. Մանսուրյանն ասաց, որ իր համար երաժշտություն գրելը ոչ թե պահի եւ ներշնչանքի արդյունք է, այլեւ տառապալի աշխատանք. «Ոմանք հավատացած են, որ շեդեվրը պահի մեծ թելադրանքով է գոյանում: Եղել են մարդիկ, որոնք ինձնից միանգամից ներշնչանք են պահանջել, բայց ինձ համար այդպիսի բան գոյություն չունի, ես պետք է շատ չարչարվեմ, որից չգիտեմ՝ արդյունք կլինի, թե՞ ոչ, որովհետեւ գեղարվեստական մեկ կատարյալ մարմին ստեղծելը գրեթե անհնարին մի բան է»:

Տ. Մանսուրյանը հիշեց նաեւ, թե ինչպես եղավ իր մուտքը կինոյի աշխարհ. «1964 թ. հոնսերվատորիոյի ուսանող էի, երբ մի ռեժիսոր առաջարկեց ֆիլմի համար երաժշտություն գրել, որտեղից էլ եղավ իմ մուտքը կինոյի աշխարհ, ինչը չափազանց գրավիչ աշխարհ է: Այն միանգամից կլանում է քեզ, եւ եթե դուրս գալու ուժը չունենաս՝ կտանի քեզ: Իմ դեպքում դա տեւեց մինչեւ 1985 թ.»:

Տ. Մանսուրյանն անդրադարձավ նաեւ իր «Ռեքվիեմին» եւ պարզաբանեց, թե ինչու այդ ստեղծագործության պրեմիերան առաջինը տեղի ունեցավ մեկ տարի առաջ Գերմանիայում, ապա մեկ տարի հետո՝ ապրիլի 24-ին Հայաստանում. «Մյունխենից ինձ բազմիցս առաջարկել էին ինչ-որ ստեղծագործություն գրել, սակայն խուսափում էի, բայց վերջում առաջարկեցին գրել «Ռեքվիեմ»: Ես պապանձվեցի եւ այլեւս խուսափելու հնարավորություն չունեցա»: Մաեստրոն սակայն սրտնեղած նշեց, որ երբ ամեն ինչ պատրաստ էր, նրանք ուղարկեցին պայմանագիր, որը Տ. Մանսուրյանն ստորագրել է առանց կարդալու եւ հետո է միայն տեսել, թե ինչ է արել. «Կետերից մեկն այն էր, որ իրենք միայն տարի ու կես իրավունք ունեին այն նվագելու, ինչպես նաեւ առաջին ձայնագրության իրավունքը իրենց է պատկանում: Այս արգելքներն էին իմ առջեւ դրված»:

Վերջում Տիգրան Մանսուրյանն իրեն հատուկ խորությամբ ասաց. «Հաճոյանալը, գրավիչ լինելն ամենեւին էլ խնդիր չէ, այլ հարց է՝ այնպիսի քար դնել գետնին, որը չկարողանան տեղից շարժել»:

Մ. Հ.

# Հայաստանն առաջին անգամ ռոք խմբով հանդես կգա Եվրոտեսիլին

«Եվրոտեսիլ 2013» երգի միջազգային մրցույթին Հայաստանը ներկայացնող «Դորիանս» ռոք խումբը եւ հայաստանյան պատվիրակությունը մայիսի 7-ին կմեկնեն մրցույթը հյուրընկալող երկիր՝ Շվեդիա: Մայիսի 10-ին խումբը հատուկ համերգ կտա Դանիայի մայրաքաղաք Կոպենհագենում: Գոռը եվրոտեսիլյան պատմության մեջ այն միակ երգիչն է, որի մասնակցությանը «Եվրոտեսիլ 2013»-ին կողմ է հայերի համարյա թե մեծամասնությունը: Գոռը արդեն մեկ անգամ եղել է Եվրոտեսիլի բեմում՝ որպես Եվա Ռիվասի բեք-վոկալ:

Խմբի պրոդյուսեր **Արա Թադեւոսյանը** նշեց, որ Կոպենհագենի ամենամեծ Amgerbio համերգասրահում համերգ տալու նախաձեռնությունը պատկանում է Դանիայում Հայաստանի Հանրապետության դեսպանատանը եւ Հայաստանի հանրային հեռուստաընկերությանը. «Կարծում ենք, որ համերգը լրացուցիչ առիթ է ներկայանալու, մրցույթից մի քանի օր առաջ մեծ բեմում հանդես գալը օգտակար կլինի: Հայաստանը առաջին անգամ է ներկայանում «Եվրոտեսիլին» ռոք խմբով, մինչ այդ եղել են փոփ կամ ֆոլկ կատարումներ: Շատ ուրախալի է, որ այս երգը հեղինակել է Թոմի Այոմին, որը նաեւ մեր ուժեղ դաշնակիցն է»:

Պրոդյուսերը տեղեկացրեց, որ կիսաեզրափակչի օրերին Այոմին հանդես է գալու «Եվրոտեսիլ 2013»-ի մասին երկրպագուներին ուղղված հատուկ հաղորդագրությամբ:

Արա Թադեւոսյանը նշեց, որ «Եվրոտեսիլը» ստեղծագործական փուլ է խմբի անդամների կյանքում, ոչ թե գերնպատակ, եւ իրենց մեծ ցանկությունն է, որպեսզի իրենց Lonley Planet երգի համամարդկային բովանդակությունը, պատգամը հասնի ունկնդրին:

Խմբի մեներգիչ **Գոռ Սուջյանն** էլ իր հերթին նշեց, որ փորձ է կատարվելու ներկայանալ մինիմալիստական ոճում՝ առանց հավելյալ բեմական դեկորացիաների եւ պարային համարների:

Իսկ **Գոհար Գասպարյանը** նշեց, որ պակասել է մասնակից երկրների պորոմոտուրերի թիվը, քանի որ այդ ֆինանսական ռեսուրսները երկրները նախընտրում են նպատակաուղղել ավելի թիրախային հարցազրույցներին, համացանցային առաջմղման համար:

Պատվիրակության ղեկավարը նշեց, որ բեմում հանդիսատեսը հնարավորություն կունենա տեսնել նոր ոճով ներկայացող «Դորիանսին»:

Տղաների հագուստի դիզայնով զբաղվել է ոճաբան Արմեն Գալյանը:

Նշենք, որ նա ժամանակին ցանկացել է դառնալ տնտեսագետ, հետո՝ ծրագրավորող, ապա ընդունվել է թատերական ինստիտուտ, իսկ վերջում, ինչպես ինքն է ասում, ամեն ինչ խառնվել է ու որոշել է երաժիշտ դառնալ:

Վերջին 4 տարիների ընթացքում «Դորիանս» խումբն արժանացել է«Տարվա հայտնություն»,«Տարվա լավագույն ռոք խումբ», «Տարվա լավագույն տեսահոլովակ», «Rock Number One» եւ այլ մրցանակների:

«Դորիանս» խումբը կազմավորման օրվանից ի վեր ունեցել է ակումբային տասնյակ համերգներ Հայաստանում, 2010 թվականի նոյեմբերին համերգներով հանդես է եկել Մոսկվայում, մասնակցել 2011 թվականի օգոստոսին ելույթ է ունեցել Երեւանում կայացած Սերժ Թանգյանի համերգի բացմանը, բայց խմբի համար ամենահիշարժանը թերեւս եղել է 2012 թվականի սեպտեմբերի 10-ին Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կայացած համերգը, որի ընթացքում «Դորիանսը» մեկ բեմում հանդես եկավ հանրահայտ երաժիշտներ Գլեն Հյուզի եւ Դերեք Շերինյանի հետ:

Ի դեպ, Գոռը երաժիշտ դառնալու որոշումը կայացրել է այն ժամանակ, երբ առաջին անգամ լսել է «Led Zeppelin» ռոք-խմբի հանրահայտ «Stairway to Heaven» երգը:

«Led Zeppelin» ռոք-խումբը մեծ դեր է ունեցել «Դորիանսի» կազմավորման հարցում. 2008 թվականին, երբ տղաները համախմբվել եւ ստեղծել էին խումբ՝ «Gor and Friends» անվամբ, այսինքն՝ «Գոռ եւ ընկերներ», սկսել են կատարել Led Zeppelin-ի քավերները: Իսկ ընդամենը կես տարի անց որոշել են հանդես գալ նաեւ հեղինակային ստեղծագործություններով ու վերանվանվել են «Դորիանս»:

Նշենք, որ «Դորիանս» խմբի մենակատար Գոռ Սուջյանը դեռ անցյալ տարի էր պատրաստակամություն հայտնել ելույթ ունենալ «Եվրոտեսիլ» երգի միջազգային մրցույթում, սակայն այդ տարի Հայաստանը չմասնակցեց մրցույթին:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

## ԱՐՁԱԳԱՆՔ

# Սազակա՞ն է

Մեծարգո պրն Ավիկ Իսահակյան, երբ տարիներ առաջ Ձեր գործընկերները մի քանի նամակ հրապարակեցին, որոնք վարկաբեկում էին Ձեզ, ես շատ վրդովվեցի, ոչ թե փաստերի ճիշտ կամ սխալ լինելու համար, այլ հեղինակների ցածր, մտավորականներին ոչ վայել էպիտետների ու որակումների համար:

Ինձ նսեմացած ու արժանապատվությունս վիրավորված զգացի ակադեմիայի գիտաշխատողների թույլ տված «Ավիկ-Հավիկ» որակման համար, ցածր ոճի համար:

Անցան տարիներ, եւ «Հայոց աշխարհում» կարդում եմ Ձեր հոդվածը, կասեի՝ հայհոյագիրը, ուղղված լիբանանահայ գրող-խմբագիր Պողոս Սնապյանին:

Վերտառություն էիք ընտրել «Ում շունն է Պողոս Սնապյանը»: Ո՞վ է նա՝ ենթական, թողենք, ինչպես է նա գնահատում մեր մեծերին՝ իր գործն է, եթե գրում է, ապա իր ընդունելի մտքերն ընդունում ենք, մերժելին՝ մերժում: Դա էլ մեր՝ ընթերցողներիս իրավունքն է: Որքան ընթերցող՝ այնքան կարծիք, որքան գրող՝ այնքան ոճ ու ճաշակ:

Բարեկամս, երբ Դուք գրում էիք նյութի տողերը, մեկ անգամ, գոնե, մեկ անգամ Ձեր մտքով անցա՞վ, թե ով եք Դուք: Իսահակյանի շառավիղը, իր ժամանակի ամենաբարեկիրթ մարդկանցից մեկի՝ Վիգեն Իսահակյանի զավակը, գեղեցիկ մոր տղան: Ինչո՞ւ այդքան իջաք, էժանացաք («թուրքի մայլում անտեր հաչող շուն», «վնգստոց»): Սազակա՞ն է:

Նորից կարդացեք այս տողերը եւ, եթե կզգաք, որ, իսկապես, Ձեզ չի սազում, ուրեմն, ամեն բան չէ, որ կորած է, գուցե, տարիքի հետ դեռ իմաստնություն կգա: Ինտելիգենտ մեկը թույլ կտա՞ իրեն այնպիսի որակումներ գրել ուրիշ «գրագետի» (չակերտները Ձերն են) մասին: Ի՞նչ է մտածել խմբագիրը, ի՞նչ է սովորելու աշակերտն այդ ոճից, կամ ուսանողը:

«Հավիկ-Մավիկի» ժամանակ մտածում էի՝ տեսնես ովքե՞ր են հեղինակները, ի՞նչ ընտանիքում են մեծացել, ո՞ր դպրոցն են ավարտել, ո՞վ է նրանց դիպլոմ տվել, ո՞վ ակադեմիա ընդունել:

Հիմա, երբ կարդում եմ Ձեր նյութը, ափ ի բերան եմ մնացել. Աստված իմ, սա ի՞նչ մակարդակ է, ի՞նչ կզգար, ինչպե՞ս կգնահատեր այս «ոճը» Վարպետը, նրա որդին:

«Ազգախոսություն», «նոր Փանջունի», «դասալիք». այս բառերը մարդ արարածին են բնորոշում, ընդունենք, բայց ինչո՞ւ «լուսնահաչ», «Բեյրութում ու Հալեպում թափառող շուն»: Համաձայնվեք, որ մեղմ ասած՝ սոլիդ չէ:

Ես չգիտեմ, Դուք հայր եք, թե ոչ, բայց, բոլոր դեպքերում, պատվաբեր չէ Սնապյանին ծակելու համար կպչել նրա ամերիկաբնակ որդուն: Ցածր է:

Ինչ վերաբերում է «Ես այդ շունն եմ»-ին, ապա, կարծեմ, Վարպետն էլ գրել է. «Ես երգիչ եմ, երկնի թիթեռ ...»: Ի՞նչ է՝ այդ կարդալիս թիթեռնացանցը (сачок) առնենք ձեռքնե՞րս:

Ձեր խոսքից ու վարքից, էլ չասեմ՝ գրչից, պետք է քաղաքավարություն ու քաղաքակրթություն միայն հորդա:

ՍԱԹԵՆԻԿ ԱՂԱՋԱՆՅԱՆ

# Հրաժեշտի խօսքեր

Ապրիլ 11-էն ի վեր բան մը պակաս է աշխարհի բազկերակէն, յատկապէս՝ հայ ժողովուրդի սրտէն.

**ԱՐԱՄԱՅԻՍ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ**

Այս կորուստը մեր շօշափելի աշխարհէն՝ պարապութեան անկիւն մը կը ստեղծէ բոլոր անոնց համար, որոնք իսկապէս կը ճանչնային զինք:

Ո՞ւր եւ ինչպէ՞ս գտնել նորէն այսպիսի իդիալիստ մը, այսպիսի խղճամիտ մտածող մը, այսպիսի մտաւորական մը՝ ապականած դարու մը մէջ, ուր կը կառավարէ անտարբերութիւնը դէպի հոգեկան արժէքները, էգոիզմը, անխղճամտութիւնը եւ աղաւաղումը:

Իմէ առաջ՝ ան մտահոգ էր իր ժողովուրդի համար. իր սիրտը կը տրոփէր այդ ժողովուրդի համար եւ իր ամենախորունկ կսկիծն էր անոր տառապանքը:

Սիրելի Արամայիս, գանձատուփիս մէջ պահելու եմ մեր երկար զրոյցները, լի մտահոգութեամբ մարդկութեան համար, լի իմաստով ու խորութեամբ:

Եւ քանի որ չեմ հաւատար մահուան, մանաւանդ անոնց համար, որոնք իրենց արահետները դրոշմած են հողագունդի վրայ, կը զգամ, որ գիտակից ես բոլորիս արցունքներուն՝ քու բացակայութեանդ համար: Անոնք ոչ միայն կը թափուին մեր աչքերէն, այլ նաեւ մեր սրտերէն ու հոգիներէն:

Ցաւակցութիւններս անձնական կեանքի ընկերոջդ՝ Զոգոնտային ու քաղցր աղջկանդ՝ Մանուշին:

Քեզ՝ ցտեսութիւն, սիրելիս, մինչեւ այն ժամանակ, երբ նորէն հանդիպինք, ուրիշ ժամանակի, ուրիշ տարածութեան մէջ:

Առայժմ՝ ստացի՛ր աշխարհի բոլոր ծաղիկները իբրեւ յիշատակիդ դափնեպսակ:

Սէր, ընդմիշտ...

ԱԼԻՍԻԱ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ
Լոս Անջելես

# «Հրազդանը» կհյուրընկալի գավաթի եզրափակիչի մասնակիցներին

Այսօր «Հրազդան» մարզադաշտում ժամը 19-ին կտրվի ֆուտբոլի Հայաստանի գավաթի եզրափակիչ հանդիպման մեկնարկը: Գործող գավաթակիր Գյումրիի «Շիրակը» պատվավոր մրցանակը կվիճարկի «Փյունիկի» հետ, որը 5 անգամ տարբեր տարիներին պատվո շրջան է կատարել բյուրեղապակյա գավաթով:



ՖՈՏՈԼՈՒՐ

Գյումրիի «Շիրակը» 3-րդ տարին անընդմեջ իրավունք է ստացել վիճարկելու Հայաստանի գավաթը: Շիրակցիները 6-րդ անգամ են հանդես գալու գավաթի եզրափակիչում: Գավաթը նվաճելու «Շիրակի» առաջին 4 փորձերն անհաջողության են մատնվել: 1993-ին եւ 1994-ին «Շիրակը» եզրափակիչում 2 տարի անընդմեջ գավաթը զիջել է «Արարատին», իսկ 1999-ին պարտվել է «Ցեմենտին»:

2011-ին երկարատեւ ընդմիջումից հետո գյումրեցիները կրկին իրավունք ստացան վիճարկելու գավաթը: Սակայն 4-րդ փորձն էլ անհաջող ավարտվեց: «Շիրակը» եզրափակիչում 1-4 հաշվով պարտվեց «Միկային», որը 6-րդ անգամ նվաճեց պատվավոր մրցանակը:

Եվ միայն անցյալ տարի շիրակցիներին վերջապես ուղեկցեց հաջողությունը: Ապրիլի 29-ին Գյումրիի վերակառուցված մարզադաշտում «Շիրակը» շնորհիվ Լամին Լի Յորոյի խփած միակ գոլի հաղթեց «Իմպուլսին» եւ առաջին անգամ նվաճեց ՀՀ գավաթը:

Գավաթի ընթացիկ խաղարկությունում շիրակցիները պայքարից դուրս են մղել «Արարատին» (1-0, 0-0) եւ «Միկային» (1-0, 0-0): Հետաքրքրական է, որ գավաթի եզրափակիչ խաղից ընդամենը 4 օր առաջ են մրցել «Շիրակն» ու «Փյունիկը»: Առաջնության 40-րդ տուրի երեւանյան մրցախաղում Լամին Լի Յորոյի խփած միակ գոլի շնորհիվ «Շիրակը» հաղթեց եւ ժամկետից շուտ նվաճեց Հայաստանի չեմպիոնի տիտղոսը: Այնպես որ այսօր «Շիրակը» խաղադաշտ դուրս կգա որպես Հայաստանի նորընծա չեմպիոն ու կփորձի 2-րդ տարին անընդմեջ Գյումրիում պահել ՀՀ գավաթը:

«Փյունիկը» 9-րդ անգամ է խաղալու գավաթի եզրափակիչում, ինչը յուրօրինակ ռեկորդ է: Վերջին անգամ փյունիկցիները եզրափակիչ էին դուրս եկել 2010-ին՝ վճռորոշ խաղում 4-0 հաշվով ջախջախելով «Բանանցին» ու 5-րդ անգամ նվաճելով պատվավոր մրցանակը: Ինչ խոսք, փյունիկցիներն էլ լի են վճռականությամբ 6-րդ անգամ պատվո շրջան կատարելու «Հրազդանում» ու այդ ցուցանիշով հավասարվելու ռեկորդակիր «Միկային»:

Հիշեցնենք, որ «Փյունիկը» ՀՀ գավաթի անդրանիկ խաղարկության եզրափակիչի մասնակիցն է: 1992-ին թիմը հանդես էր գալիս ՀՄԸՄ անվանումով, որին մարզում էր Խորեն Հովհաննիսյանը: Եզրափակիչում ՀՄԸՄ-ն 0-2 հաշվով պարտվեց «Բանանցին», որի մարզիչը Վարուժան Սուքիասյանն էր:

«Փյունիկը» գավաթի ընթացիկ խաղարկությունում պայքարից դուրս է մղել Դիլիջանի «Իմպուլսին» (2-2, 3-0) եւ Կապանի «Գանձասարին» (1-0,1-1):

«Հրազդանը» 9-րդ անգամ կհյուրընկալի գավաթի եզրափակիչի մասնակիցներին: 1992-1999-ին հենց գեղեցկատես այդ մարզադաշտում են կայացել առաջին 8 եզրափակիչները: Հետաքրքրական է, որ «Փյունիկն» ու «Շիրակը» 3-ական անգամ «Հրազդանում» մասնակցել են գավաթի եզրափակիչ հանդիպմանը: Մրցակիցները գավաթի եզրափակիչ խաղում առաջին անգամ են միմյանց հետ մրցելու:

# Հայ չեմպիոնի մեծարման երեկո Բրյուսելում



**Բելգիահայ բռնցքամարտիկ Ալեքսանդր Միսկիրտչյանի կայծակնային հաղթանակները մեծ արձագանք են ստացել բելգիական լայն շրջանակներում: Բելգիական հանրային հեռուստատեսության ֆրանսիական առաջին ալիքը՝ La une-ը երեւի թե 10 տարուց ի վեր երբեւէ չի անդրադարձել Հայաստանին վերաբերող որեւէ իրողության, սակայն այս տարվա մարտ ամիսը եղավ բեկումնային: 3-րդ անգամ վաստակելով Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը, Ալեքսանդր Միսկիրտչյանի հաղթանակը ցնցեց բելգիական հասարակությանը: Թեպետ հանդես գալով Բելգիայի դրոշի ներքո, այնուամենայնիվ, բոլոր լրատվամիջոցներն անվերապահ շեշտում են Ալեքսի հայկական ծագումը: Հաղթանակը մեծ ուրախություն էր պատճառել նաեւ Բելգիայի թագավոր Ալբերտ 2-րդին, որն անձամբ շնորհակալական եւ շնորհավորական ուղերձ էր հղել մեր հայրենակցին:**

**«Ազգը» Ալեքսանդր Միսկիրտչյանին հանդիպեց Բրյուսելի THON հյուրանոցում, հայ-բելգիական առեւտրի պալատի կողմից կազմակերպված մեծարման երեկոյին, որտեղ ներկա էին ՀՀ դեսպան Ավետ Ադոնցը, ՆԱՏՕ-ում ՀՀ առաքելության ղեկավար Արմեն Եդիգարյանը, բարձրաստիճան հյուրեր եւ տարբեր լրատվամիջոցների ներկայացուցիչներ:**

**Արդեն տասներկու տարի է Ալեքսի ընտանիքը Թիֆլիսից տեղափոխվել է Բելգիա: Մայրը, տիկին Իրինան նշեց, որ հակառակ իր կամքին, դեռ վաղ հասակից Ալեքսը մեծ հետաքրքրություն է ունեցել բռնցքամարտի նկատմամբ, սակայն Բելգիա տեղափոխվելուց հետո է սկսել, կանոնավոր պարապել եւ շատ կարճ ժամանակահատվածում, 2005-ին, արդեն պրոֆեսիոնալ բռնցքամարտիկի անուն է վաստակում: 2009-ին դառնում է Բելգիայի, նույն տարում նաեւ Եվրոմիության չեմպիոն: 2011-ին ձեռք է բերում Եվրոպայի չեմպիոնի կարգավիճակ: 2012-ին հաղթելով ֆրանսիացի բռնցքամարտիկին՝ ստանձնում է Եվրոպայի կրկնակի չեմպիոնի տիտղոսը: Նույն տարում հիմնադրում է իր սեփական բոքսի ակադեմիան:**

**2013-ին Դանիայում, հանդես գալով նորվեգացի Անդրեաս Էվենսի դեմ, դժվարին պայքարի վերջին 12- րդ վճռական ռաունդի ավարտին, որին մնացել էր մեկ րոպե երեսուն վայրկյան, աջից ուժեղ հարված հասցնելով հակառակորդի դեմքին, 27-ամյա Ալեքսը հաղթող է ճանաչվում՝ կրելով Եվրոպայի եռակի չեմպիոնի տիտղոսը:**

**Երեկոյի ընթացքում ներկայացվեց Դանիայում կայացած մրցապայքարի մանրամասները: Մեր հայրենակիցը կրկին վերապրելով խաղի ընթացքում ունեցած իր հոգեբանական ապրումները, նշեց, որ հակառակորդի դիմադրությունն ու յուրաքանչյուր 2 րոպեն մեկ կրկնվող հարձակումներն այնքան ուժեղ էին, որ հաղթանակին այլեւս չէր հավատում, բայց, միեւնույն ժամանակ համառորեն դիմադրելով եւ անտեսելով անտանելի հոգնածությունը, մտովի վանկարկում էր. «Ես պետք է հաղթեմ: Ես պետք է հաղթեմ»: Ինչ խոսք, լավատեսությունն ու համառ կամքը թերեւս հանդիսացան Ալեքսի հաղթանակի գրավականը:**

**Բռնցքամարտը դժվար ապրուստ է եւ պահանջում է զոհաբերություն, նաեւ հարգանք հակառակորդի նկատմամբ, ընդգծեց օրվա հերոսը, հավելելով, որ սա հաղթանակների սկիզբն է եւ ապագայում կանի հնարավորը, որպեսզի վաստակի աշխարհի չեմպիոնի տիտղոսը:**

**Աննկարագրելի էր Ալեքսի ուրախությունն ու հուզմունքը: Նրա մարզիչը նշեց, որ ամեն հաղթանակից հետո Բելգիայի դրոշին զուգահեռ, իր կողմից հպարտորեն բարձրացնում է նաեւ Հայաստանի դրոշը:**

**Ալեքսի հաջորդ մրցապայքարը կկայանա հունիսի 21-ին Բելգիայի ֆրանսիական հատվածում՝ Namur-ում: Հուսանք, որ մեր հայրենակիցը կրկին հաղթանակած դուրս կգա եւ կվաստակի Եվրոպայի քառակի չեմպիոնի տիտղոսը:**

ԱՐԱՔՍ ՍԱՓԱՐՅԱՆ
Բրյուսել



# Հայ հեծանվորդները մրցանակակիր դարձան

**Հայ հեծանվորդները հաջող ելույթներ ունեցան Իրանում եւ Լեհաստանում անցկացված միջազգային մրցաշարերում: Երեւանցի Էդուարդ Մաթոսյանը Իրանում անցկացված ասիական լիգայի բաց առաջնությունում 100 մետր միջանկյալ վերջնագծով խմբային մրցավազքում գրավեց 3-րդ տեղը:**

**Հովհաննես Հովհաննիսյանը Վարշավայում մասնակցեց 2 մրցման: Առաջինում նա 3 կմ հետապնդումով հեծանվավազքում գրավեց մրցանակային 3-րդ տեղը: Իսկ մյուս մրցաշարում հայ հեծանվորդը 68 կմ խճուղային հեծանվավազքի կրիտերիում մրցաձեւում ցույց տվեց 2-րդ արդյունքը:**

# Մովսիսյանը հաղթողին զիջեց լրացուցիչ գործակիցներով

**Իսպանիայի Մայորկա քաղաքում ավարտվեց շախմատի միջազգային մրցաշարը: Հայաստանը ներկայացնող գրոսմայստեր Կարեն Մովսիսյանը 9 հնարավորից վաստակած 7 միավորով զբաղեցրեց 4-րդ տեղը: Նա միայն լրացուցիչ գործակիցներով գլխավոր մրցանակը զիջեց իսպանացի Սալվադոր դել Ռիո դե Անգելիսին: Ավարտական 3 տուրերում Կարենը հաղթեց Իլյա Զարագացկուն, ոչ-ոքի խաղաց Վլադիմիր Պեսկովի եւ մրցաշարի հաղթող Սալվադոր դել Ռիո դե Անգելիսի հետ: Հենց այդ պարտիան էլ վճռորոշ եղավ գլխավոր մրցանակի համար պայքարում:**

**Հաջող էր նաեւ Բելառուսը ներկայացնող Սերգեյ Կասպարովի ելույթը: Նա 6 միավորով գրավեց 12-րդ տեղը: Կասպարովը նախ ոչ-ոքի խաղաց Մարսելո Պանելոյի հետ, ապա հաղթեց Մաուրիցիո Վասալոյին, իսկ ավարտական տուրում պարտվեց Վլադիմիր Պեսկովին:**

# Տաթեւ Աբրահամյանն առաջատարների շարքում է



**Սենթ Լուիսում անցկացվող շախմատի ԱՄՆ-ի առաջնության կանանց մրցաշարում հաջող է մեկնարկել Տաթեւ Աբրահամյանը, որը 3 տուրից հետո վաստակած 2,5 միավորով ընթանում է 2-րդ տեղում: Տաթեւը մրցաշարը սկսեց Սաբինա Ֆոյսորի եւ Քամիլա Բագինսկայթեի նկատմամբ տոնած 2 անընդմեջ հաղթանակներով: 3-րդ տուրում նա առաջին կես միավորը կորցրեց Ալյոնա Կացի հետ պարտիայում:**

**Առաջատարն Իրինա Կրուշն է, որը հաղթել է Ալյոնա Կացին, Իրինա Զենյուկին եւ Աննա Զատոնսկիխին:**

**Տղամարդկանց մրցաշարին մասնակցող 3 հայ շախմատիստներից առավել հաջողը Վարուժան Հակոբյանի մեկնարկն է: Նա 2 միավորով 5-րդ տեղում է: Հակոբյանը մեկնարկային տուրում ոչ-ոքի խաղաց Մելիքսեթ Խաչիյանի հետ, ապա միավորը կիսեց Բենջամին Ֆինեգոլդի հետ պարտիայում, իսկ 3-րդ տուրում հաղթեց Կայդեն Տրոֆին:**

**1,5 միավոր ունի Մելիքսեթ Խաչիյանը, որը հաշտություն է կնքել նաեւ Ալեքսանդր Օնիշչուկի ու Յուրի Շուլմանի հետ: Իսկ ՖԻԴԵ-ի պատվո վարպետ Սամուել Սեւյանը 1 միավորով հանգրվանել է 21-րդ հորիզոնականում: Նա ոչ-ոքիներ գրանցելով Ալեխանդրո Ռամիրեսի եւ Յուրի Շուլմանի հետ պարտիաներում, 3-րդ տուրում պարտվեց Ալեքսանդր Շաբալովին:**

**3 միավորով առաջատարը Գատա Կամսկին է: 2,5-ական միավոր ունեն Կոնրադ Հոլթն ու Դանիել Նարոդիցկին:**

# Հայ շախմատիստներից 7-ը մեկնարկեցին հաղթանակով

**Լեհաստանի Լեգնիցա քաղաքում ընթացող շախմատի Եվրոպայի անհատական առաջնությունում 14 հայ շախմատիստներից 7-ը հաղթանակով մեկնարկեցին: Առաջին հաղթանակները տոնեցին Սերգեյ Մովսիսյանը, Գաբրիել Սարգսյանը, Տիգրան Պետրոսյանը, Ավետիք Գրիգորյանը, Ռոբերտ Հովհաննիսյանը, Արման Փաշիկյանը եւ Հովհաննես Գաբուզյանը:**

**Վլադիմիր Հակոբյանը, Հրանտ Մելքումյանը, Զավեն Անդրեասյանը, Կարեն Գրիգորյանը եւ Ռոբերտ Աղասարյանն իրենց պարտիաներն ավարտեցին ոչ-ոքի: Իսկ Էլինա Դանիելյանն ու Վլադիմիր Պողոսյանը մրցաշարը սկսեցին պարտությամբ:**

# Ուղեգիր նվաճել չհաջողվեց

Բրազիլիայում ավարտվեց շախմատի աշխարհի առաջնության փնջային մրցաշարը, որի 2 ուղեգրերն էին վիճարկում 84 շախմատիստներ: Ցավոք Գրիգոր-Սեւակ Մխիթարյանին չհաջողվեց ուղեգիր նվաճել: Նա 9 հնարավորից վաստակած 6,5 միավորով զբաղեցրեց 4-րդ տեղը: Ավարտական տուրում բրազիլահայ շախմատիստը հաշտություն կնքեց Դեյվ Սիգուենասի հետ:

19-ամյա բրազիլահայ Արմեն Բրուտյանը 6,5 միավորով գրավեց 9-րդ տեղը՝ լրացնելով ՖԻԴԵ-ի վարպետի նորմա: Նա վերջին տուրում հաղթեց Դեյսի Կորին:

Խաղարկվող 2 ուղեգրերին տիրեցին Բրազիլիայի ներկայացուցիչներ Ռաֆայել Լեյթաոն եւ Ալեքսանդր Ֆիեռը, որոնք վաստակեցին 7,5 միավոր: Լրացուցիչ գործակիցներով հաղթող ճանաչվեց Լեյթաոն:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# 1915-ի ապրիլի 24-ը՝ ASSOCIATED PRESS-ի պատմական իրադարձությունների ցանկում

Associated Press-ը ներկայացրել է ապրիլի 24-ին կատարված համաշխարհային պատմական իրադարձությունների ցանկ, որտեղ 1915-ը նշվել է որպես Հայոց ցեղասպանության հիշատակի օր: Տարվա 114-րդ օրը պատմության մեջ նշանավորվել է մի շարք կարեւոր իրադարձություններով: 1792 թ. այդ օրն է ստեղծվել Ֆրանսիայի պետական օրհներգը՝ «Մարսելիեզը»: 1800 թ. ԱՄՆ Կոնգրեսը հաստատել է Կոնգրեսի գրադարանի ստեղծման օրինագիծը: 1916-ի ապրիլի 24-ին 1600 իռլանդացիներ ապստամբություն են բարձրացրել՝ գրավելով Դուբլինի մի քանի կարեւոր նշանակության վայրեր, 1953 թ. այդ օրը Մեծ Բրիտանիայում Եղիսաբեթ Երկրորդ թագուհին ասպետի տիտղոս է շնորհել պետական գործիչ Ու. Չերչիլին:

1970 թ. ապրիլի 24-ին Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունն իր առաջին արբանյակն է արձակել տիեզերք:

1980 թ.-ի այդ օրը Մ. Նահանգները անհաջող փորձ է կատարել՝ ազատելու Իրանում ամերիկացի պատանդներին: Առաքելությունը ձախողվել է՝ հանգեցնելով ԱՄՆ ութ զինծառայողների մահվան:

Հինգ տարի առաջ՝ ապրիլի 24-ին Սպիտակ տունը մեղադրել է Հյուսիսային Կորեային՝ Սիրիայի գաղտնի միջուկային ծրագրին աջակցելու համար՝ հայտարարելով, որ 2007-ին Իսրայելի կողմից ոչնչացված սիրիական միջուկային ռեակտորը նախատեսված չի եղել խաղաղ նպատակների համար:

Ապրիլի 24-ի օրվա իրադարձությունների կարգախոս ընտրվել է՝ «Փոխելը եւ բարելավելը երկու տարբեր բաներ են» գերմանական ասացվածքը:

***(Տեղեկությունը՝ լոսանջելեսյան «Նոր օր» շաբաթաթերթից):***

**Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ**

# Ռիչարդ Հովհաննիսյան- Էլի Վիզել

*երկխոսություն ցեղասպանության թեմայով*



Ժանո Պողոսյանը Օրանժից (Կալիֆոռնիա) տեղեկացնում է, որ Ուալլասի «Ամենայն Հավատ» մատուռում, հոծ բազմության ներկայությամբ, ապրիլի 17-ին տեղի է ունեցել երկխոսություն ցեղասպանությունը հիշելու պարտականության վերաբերյալ պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանի եւ Նոբելյան մրցանակի դափնեկիր Էլի Վիզելի միջեւ (նկարում՝ ձախից):

Հարգարժան զրուցակիցները կարեւորել են հայերի ցեղասպանության եւ Հոլոքոսթի զոհերի հիշատակը հարգելու եւ սերունդներին փոխանցելու մարդկության բարոյական պարտականությունը եւ արդարություն պահանջելու իրավունքը: Նրանք խոսել են իրենց անձնական եւ համայնքային փորձառությունների մասին, Հովհաննիսյանը հարցրել է, թե երբեւէ ամբողջական արդարություն կլինի՞, որին Վիզելը պատասխանել է «ոչ» նույնիսկ ճանաչման եւ փոխհատուցման դեպքում: Հովհաննիսյանն անմիջապես արձագանքել է, որ հայերը դեռ այդ ճանաչմանն եւ փոխհատուցմանն էլ չեն արժանացել Թուրքիայի կողմից:

Դոկտ. Վիզելը այնուհետեւ խոսել է «հիշատակությունը կիրք դարձրած» հայերի մասին եւ թե ինչպես «հայոց դասը դարձավ նաեւ իմ դասը»:

Որպես երկխոսության համակարգող հանդես է եկել Չեփման համալսարանի պատմության ֆակուլտետի ամբիոնի վարիչ Ջենիֆեր Քինը:

Հ. Ծ.

# ՀԲԸ միության Պլովդիվի երիտասարդ արհեստավարժները՝ ի նպաստ Հայաստանի



Իր հիմնադրման 103-րդ տարեդարձի շրջանակներում ՀԲԸ միության Պլովդիվի մասնաճյուղը «Երեխաներն ու երիտասարդները մեր ապագան են» նշանաբանի ներքո կազմակերպել էր մի բարեգործական գալա-համերգ, որի ընթացքում հինգ հազար դոլար է հավաքվել, տեղեկացնում է ՀԲԸՄ-ի մամլո գրասենյակից ստացված հաղորդագրությունը: Գումարը ծախսվելու է Հայաստանում ՀԲԸՄ-ի ամառային ծրագրերին բուլղարահայ երեխաների մասնակցությունը ապահովելու նպատակով:

Պլովդիվի երիտասարդ արհեստավարժները մեծ դերակատարություն են ունեցել գալա-համերգի հաջող անցկացման գործում: Ծրագրին մասնակցել են ՀԲԸՄ-ի «Էրեբունի» վոկալ եւ գործիքային խումբը, «Նաիրի» հայկական պարի եւ «Ռաչենիցա» բուլղարական պարի համույթները: Երեկոյի նշանակալի երեւույթը եղել է «Երեխաներից՝ երեխաների համար» նշանաբանի ներքո անցկացված աճուրդը Հայաստանից Բուլղարիա տարված իրերի:

Կազմակերպիչները վստահեցրել են, որ հետագայում նման միջոցառումներ եւս կանցկացվեն՝ խթանելու կապը մայր հայրենիքի հետ:

Հ. Ծ.

# Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

## 2013-2014 ուս. տարվա ասպիրանտուրայի ընդունելություն

**(Առկա ուսուցում, անվճար հիմունքներով, տարկետման իրավունքով)**

1. Մանկավարժության տեսություն եւ պատմություն - ԺԹ.00.01 - 1տ.
2. Դասավանդման եւ դաստիարակության մեթոդիկա (աշխարհագրություն) ԺԳ.00.02 - 1տ.

Ասպիրանտուրայի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել պետական եւ հավատարմագրված ոչ պետական բուհերի շրջանավարտներ, ովքեր ունեն մագիստրոսի կամ բարձրագույն կրթությամբ մասնագետի դիպլոմ, հանձնել են քննություն օտար լեզվից եւ համակարգչից օգտվելու հմտություններ առարկայի տարբերակված ստուգարք՝ հաղթահարելով հետեւյալ անցումային շեմերը՝

1. Անգլերեն լեզու - 61 միավոր
2. Ֆրանսերեն լեզու - 300միավոր
3. Գերմաներեն լեզու - 80 միավոր
4. Համակարգչից օգտվելու հմտություններ - 25 միավոր

**Դիմորդները ներկայացնում են հետեւյալ փաստաթղթերը.**

1. Դիմում համալսարանի ռեկտորին՝ նշելով ընտրած մասնագիտությունը:
2. Մագիստրոսի կամ բարձրագույն կրթությամբ մասնագետի դիպլոմի եւ գնահատականների ներդիրի պատճենները՝ բացառությամբ այս տարվա շրջանավարտների, որոնց թույլատրվում է ներկայացնել ավարտական տեղեկանք:
3. Կադրերի հաշվառման անձնական թերթիկ, ինքնակենսագրություն եւ չորս լուսանկար (3x4 չափի):
4. Քաղվածք աշխատանքային գրքույկից (եթե դիմորդն աշխատում է):
5. Ռեֆերատ մասնագիտությունից առնվազն 20 էջի սահմաններում, մասնագիտական ամբիոնի կողմից գրավոր դրական գնահատականով:

Դիմորդները հանձնում են ընդունելության քննություն մասնագիտական առարկայից: «Բավարար» գնահատական ստացած դիմորդը զրկվում է ասպիրանտուրա ընդունվելու իրավունքից:

Մասնագիտական քննությունից հավասար գնահատական ստանալու դեպքում մրցույթն իրականացվում է հաշվի առնելով հետեւյալ ցուցանիշները ըստ հերթականության:

ա/ «Օտար լեզու» եւ «Համակարգչից օգտվելու հմտություններ» առարկայից ստացած տարբերակված ստուգարքների գնահատականները:

բ/ Հրատարակված գիտական աշխատանքների քանակը:

գ/ Մագիստրոսի կամ բարձրագույն կրթությամբ մասնագետի դիպլոմի ներդիրում գրանցված բոլոր գնահատականների միջինը:

դ/ Մագիստրոսական ատենախոսության կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմային աշխատանքի պաշտպանության գնահատականները:

ե/ Միջազգային կամ հանրապետական ուսանողական առարկայական մրցույթներում, օլիմպիադաներում ստացած դիպլոմները կամ միջազգային գիտաժողովներում մասնակցությունը (զեկուցումները):

Փաստաթղթերն ընդունվում են հայտարարության հրապարակման օրից մինչեւ հունիսի 2-ը, ժամը 16.30:

Ընդունելության քննությունները կազմակերպվում են 2013թ. հունիսի 6-ից 10ը:

Տեղեկությունների համար դիմել հետեւյալ հասցեով՝ Երեւան, Տիգրան Մեծի 17, 2-րդ հարկ, ասպիրանտուրայի բաժին, հեռ. 59-70-78:

***ՌԵԿՏՈՐԱՏ***

INDEX
Ակումուլյատորների մասնագիտացված սրահ
VARTA

Tel: (+374 10) 572011
Fax: (+374 10) 552085
Web: www.varmex.am
Հասցե՝ Երեւան, Տիգրան Մեծի 46
E-mail:varmex@mail.ru
FILTRON

ՀՊՃՀ (ՊՈԼԻՏԵԽՆԻԿ)
մարմնակրթության եւ սպորտի կենտրոնը հրավիրում է բոլոր ցանկացողներին մարզվելու կենտրոնում գործող հետեւյալ խմբակներում՝ լող, բազկամարտ, սեղանի թենիս, բասկետբոլ, աթլետիզմ: Ձեզ հետ կաշխատեն բարձրակարգ մասնագետներ: Ցանկացողներին խնդրում ենք զանգահարել 010567784: Հասցե՝ Տերյան 105, ՀՊՃՀ, 21-րդ մասնաշենք:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 6.5.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: